Ազգ
Azg
10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 160(4778)
ISSN: 1829-1651

# ՄԱԿ-ում կքննարկվի Ղարաբաղի հարցը

Սեպտեմբերի 13-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, այլ հակամարտությունների հետ մեկտեղ, կքննարկվի նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Այդ մասին, ըստ ռուսական լրատվամիջոցների, հայտարարել է ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը ֆինն գործընկերոջ հետ կայացած համատեղ ասուլիսում:

**ԳՆԱՀԱՏԱՆՔ**

# ԵԽԽՎ-ի մոնիտորինգի հանձնաժողովը ողջունում է

**ԵԽԽՎ-ի մոնիտորինգի հանձնաժողովը սեպտեմբերի 8-ին տարածած հայտարարության մեջ, որը հիմնվել է Հայաստանի հարցով համազեկուցողներ Աքսել Ֆիշերի եւ Ջոն Պրեսկոտի՝ հոկտեմբերի 3-7-ը ԵԽԽՎ-ի նիստում քննարկվելիք զեկույցի վրա, գնահատական է հնչեցրել Հայաստանի վերաբերյալ՝ նշելով, որ 2008 թվականի մարտյան դեպքերի էջը կարելի է փակված համարել: Այդ գնահատականը ձեւավորվել է Հայաստանում հայտարարված վերջին համաներման արդյունքի, մարտի 1-ին սպանվածների հետաքննությանը հաղորդված նոր լիցքի, ինչպես նաեւ իշխանության եւ ընդդիմության միջեւ սկսված երկխոսության փաստերը հաշվի առնելով: Ընդ որում՝ համազեկուցողների զեկույցի նախագծում ողջունվել է ԵԽ-ի չափանիշներին համապատասխան լուծում գտնելու՝ կողմերի ցուցաբերած քաղաքական կամքը: Իսկ 2008-ի դեպքերը, իրենց հետեւանքներով հանդերձ, ըստ հայտարարության, վեր են հանել Հայաստանի ժողովրդավարական ուղիով զարգանալու առաջնահերթությունները՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու, բազմակարծ քաղաքական միջավայրի ստեղծման, ազատ լրատվամիջոցների համար անհրաժեշտ մթնոլորտի ձեւավորման, ոստիկանության, դատաիրավական բարեփոխումների եւ այլն... Եվ, այս բոլորով հանդերձ՝ մոնիտորինգի հանձնաժողովի հայտարարությունը ԵԽԽՎ-ի եւ Հայաստանի կառուցողական համագործակցությունը ողջունում է: Եթե նկատի առնենք, որ այս հայտարարությունը հանրությանը հասանելի դարձավ երեկ, ընդդիմության «ջրբաժանային» հանրահավաքի օրը, ապա կարելի է հեռուն գնացող եզրակացություններ անել:**

**Մ. Խ.**

# Երիտասարդական ուխտերթ՝ ՀՀ անկախության 20-ամյակի առիթով

**Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարություններին ընդառաջ Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը սեպտեմբերի 17-ին՝ ժամը 11.00-ին, կազմակերպում է Երիտասարդական մեծ ուխտերթ՝ Ազատության հրապարակից դեպի Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, որտեղ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կկատարվի Երիտասարդների օրհնության կարգ: Արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի կունենա տոնական համերգ:**

**Մայր աթոռը սիրով հրավիրում է բոլոր երիտասարդներին՝ մասնակցելու ուխտերթին եւ օրհնության արարողությանը:**

# Լ. Տեր-Պետրոսյան. «Թող ուրիշ հարիֆ գտնեն»

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

WikiLeaks-յան բացահայտումները երեկվա հանրահավաքում ոգեշնչել էին «ջրբաժան խոստացած» արմատական ընդդիմությանը, որի համարյա բոլոր առանցքային ելույթ ունեցողները տարբեր ձեւերով օգտվեցին այս կայքի հարեհաս օգնությունից: Փաստորեն արմատականները, եթե կարողանան, փորձելու են սրել իրավիճակը՝ բոլոր ելույթներից այդ էր երեւում: Հանրահավաքը վարող **Նիկոլ Փաշինյանի** կարծիքով՝ Հայաստանում ստեղծվել է հեղափոխական իրավիճակ, հեղափոխությունը կենսական անհրաժեշտություն է՝ նա կոչ արեց պատրաստվել սահմանադրական հեղափոխության: «Ազատիր ժողովրդին պատկանելու տեղը, թե չէ ժողովուրդն ինքը կազատի», նրա այս խոսքերն ուղղված էին Հայաստանի նախագահին:



Ֆոտոլուր

Չնայած հանրահավաքի մասնակիցներն այնքան շատ չէին, որ նրանց ժողովուրդ անվանեցին, սակայն վերջին հանրահավաքի թվից ներկաների թիվն, իրոք, մեծ էր, եւ դա էլ բնական է, որովհետեւ ողջ երկխոսական ցուցադրանքից հետո ՀԱԿ-ի համակիրները եկել էին իմանալու հետագա անելիքը, դա նրանց նախորոք խոստացվել էր: Հարցի արմատը իշխանափոխության մեջ է, համակարգային փոփոխությունների մեջ է, բոլոր խնդիրների լուծումը քաղաքական է. սա էլ ՀՀՇ վարչության նախագահ **Արամ Մանուկյանի** խոսքի տրամաբանությունն էր, նա հանրահավաքավորներին հավաստացնում էր, որ եկել է նրանց ուզած սեպտեմբերը, ու նրանց ցանկությունները համընկնելու են ՀԱԿ-ի հաշվարկների հետ. «Պատրաստվեք արտահերթ ընտրությունների, դրանք գալու են», ասաց նա՝ նշելով, թե WikiLeaks-ը հերիք է իշխանափոխության համար:

*Տես էջ 2*

# Հաղորդագրություն

Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը, մտահոգված՝ Հայաստանում լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության հաջորդական ընկրկումներով, առաջիկա սեպտեմբերի 14-ին, չորեքշաբթի օրը, ժամը 14.00-16.00-ին Թեքեյան կենտրոնի դահլիճում կազմակերպում է քննարկում-բանավեճ՝ «Ինչո՞ւ լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսությունը տիրապետող չդարձավ Հայաստանում» թեմայով:

Քննարկում-բանավեճին մասնակցելու հրավիրված են մասնագետներ տարբեր բուհերից եւ ակադեմիական հաստատություններից, ինչպես նաեւ ներկայացուցիչներ լիբերալ-դեմոկրատիզմը դավանող տարբեր կուսակցություններից՝ անկախ նրանց քաղաքական դիրքորոշումներից:

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը համոզված է, որ առաջադրված թեմայի շուրջը գիտական ու գործնական աշխույժ եւ անկաշկանդ բանավեճն ու քննարկումները, սոցիալական, քաղաքական, տնտեսական եւ այլ գործոններով թեմայի արծարծումները կնպաստեն ախտորոշումներ կատարելու, համապատասխան եզրահանգումներ անելու:

Արմենական-ՌԱԿ-ը համոզված է, որ հայոց պետականության եւ հայ ժողովրդի ապագան մեծ չափով պայմանավորված է Հայաստանում լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության արմատավորմամբ եւ հաջողություններով:

Քննարկում-բանավեճը բաց է նաեւ մամուլի ներկայացուցիչների առաջ: Ավելին, վարչությունն ակնկալում է, որ մեր մամուլը չի սահմանափակվի իր տեսակի մեջ այս առաջին միջոցառման լուսաբանմամբ, այլ՝ հարցը հետագայում եւս կպահի իր ուշադրության կիզակետում:

**ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

# Վիգեն Սարգսյանը ՀՀ նախագահի աշխատակազմի ժամանակավոր ղեկավար

***Նախագահ Սերժ Սարգսյանի երեկվա հրամանագրով, իր դիմումի համաձայն, զբաղեցրած պաշտոնից ազատվել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը: Աշխատակազմի հետ ունեցած հանդիպման ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Կարեն Կարապետյանին՝ համատեղ աշխատանքի համար, հաջողություններ մաղթել նրան հետագա գործունեության ընթացքում: Կարեն Կարապետյանը, իր հերթին, շնորհակալություն է հայտնել Սերժ Սարգսյանին՝ անցած երեք տարիներին իր նկատմամբ ցուցաբերած բարձր վստահության համար: Հայտնելով հրաժարականի մասին, ՀՀ նախագահի մամուլի ծառայությունը չի մասնանշել դրա պատճառները:***

***Նախագահի նույն օրվա կարգադրությամբ աշխատակազմի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես դրվել են աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վիգեն Սարգսյանի վրա:***



**Կարեն Կարապետյանը, որ մարտին դարձել է 50 տարեկան, ՀՀ նախագահի աշխատակազմը գլխավորել է 2008-ի սեպտեմբերից: Մինչ այդ նա եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ղեկավարել ՀՀԿ խորհրդարանական խմբակցությունը: ՀՀԿ գործադիր մարմնի անդամ է, ղեկավարում է ՀՀԿ տնտեսագիտական հանձնաժողովը:**

**Վիգեն Սարգսյանը 36 տարեկան է, ավարտել է Սանկտ-Պետերբուրգի պետական կառավարման ակադեմիան, Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը եւ նույն բաժնի ասպիրանտուրան, Բոստոնի (ԱՄՆ) Թաֆտս համալսարանի դիվանագիտության եւ իրավունքի Ֆլետչեր դպրոցի մագիստրատուրան: Երիտասարդ մտավորականն ունի պետական կառավարման մարմիններում աշխատանքի մեծ փորձ. եղել է ՀՀ ԱԺ նախագահի օգնական, արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական, 2000-2003 թթ. աշխատել է պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ռեֆերենտ: 2003-ին նշանակվել է ՀՀ նախագահի օգնական, 2009 թ. հունվարին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: ԱՊՀ շրջանակներում հումանիտար համագործակցության հարցերով ՀՀ նախագահի հասուկ ներկայացուցիչն է: Վ. Սարգսյանի կազմակերպական ակնառու կարողությունները դրսեւորվեցին Ռուսաստանում, իսկ այնուհետեւ Ֆրանսիայում՝ Հայաստանի տարիների անցկացման ընթացքում, երբ նա այդ ձեռնարկների ՀՀ հանձնակատարն էր: Ամուսնացած է, ունի 2 դուստր:**

**Տ. Լ.**

# Մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ. «Սպիտակ ձեռքեր ունեմ»

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Մայրաքաղաքում ընթացող քաղաքաշինական ծրագրերն ու բարեկարգման աշխատանքները բազմաթիվ են ու, ըստ քաղաքապետարանի, դրանք պետք է առավել գեղեցկացնեն Երեւանն ու դարձնեն զբոսաշրջիկների նախընտրելի վայրը: Մայրաքաղաքի ճարտարապետական դեմքը պահպանելու, նրան գեղեցկություն հաղորդելու նպատակով ամիսներ առաջ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ նշանակեց Նարեկ Սարգսյանին: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ նախորդ ճարտարապետը՝ Միքայել Հասրաթյանը, հրաժարականի դիմում ներկայացրեց, ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ դեմ արտահայտվելով կառավարության շենքի գմբեթի կառուցման գաղափարին: Արդեն երկրորդ անգամ մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ նշանակված Նարեկ Սարգսյանը մի շարք ծրագրեր ներկայացրեց՝ կառավարության շենքի թմբուկի կառուցում, մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի վերեւում 7-հարկանի 4-աստղանի հյուրանոցի կառուցում եւ այլն, որոնք միանշանակ չընդունեցին հասարակությունն ու մասնագետները:

Երեկ, պաշտոնավարության 100 օրն ամփոփելով, Նարեկ Սարգսյանը տեղեկացրեց, որ մշակվել ու քննարկվել են մի շարք նոր առաջարկություններ: Օրինակ, Հանրապետության փողոցի հարակից մասում կտեղադրվի Գարեգին Նժդեհի արձանը: Կտեղադրվեն Մանթաշովի, Ֆրիտյոֆ Նանսենի, Կարեն Դեմիրճյանի արձանները: Հոկտեմբերին կբացվի Շառլ Ազնավուրի տունթանգարանը: Օրակարգում է Հրանտ Մաթեւոսյանի թանգարանի կառուցման հարցը: Նոր փողոցների կառուցման աշխատանքներ նույնպես տարվում են: Մասնավորապես քաղաքաշինական ուղիներ են փնտրվում Լալայանց փողոցը Պուշկինին կապելու ուղղությամբ:

Անդրադառնալով իր մեկ այլ՝ բազմաթիվ անգամ քննադատված նախագծին, Նարեկ Սարգսյանը խոստովանեց, որ հաճախ է զբոսնում Հյուսիսային պողոտայով: Նախագիծը գնահատում է շատ բարձր, սակայն նրան չի գոհացնում միջավայրը: Շատ չոր է: Այդ ուղղությամբ նոր փաթեթ է մշակվել, ըստ որի կանաչ գոտիները պետք է ավելանան, շատրվանները պետք է գործեն:

Գլխավոր ճարտարապետի մտահոգության առարկաներից է Երիտասարդական պալատի տեղում նոր շենքի կառուցումը: Թեպետ մրցույթը հայտարարվել էր ու հաղթողը հայտնի էր, սակայն Սարգսյանը հստակ պատասխան չունի, թե երբ կսկսվի շինարարությունը:

Անդրադառնալով կառավարության շենքի գմբեթի կառուցմանը, որ հասարակական մեծ աղմուկ էր բարձրացրել, Սարգսյանն ասաց, որ



նախագծին դեմ է մի քանի հոգի: «Բայց նրանք այնպիսի տպավորություն են ստեղծում, թե շատերն են դեմ»: Իրականում, երբ մի քանի ամիս առաջ Ճարտարապետների միությունն ու Հանրային խորհուրդը կազմակերպել էին քննարկում, դեմ արտահայտվողները բավական շատ էին: Պաշտոնական հրավեր ուղարկվել էր նաեւ քաղաքապետ Կարեն Կարապետյանին եւ Նարեկ Սարգսյանին, սակայն նրանք հրաժարվել էին մասնակցելուց, քանի որ ըստ մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետի՝ թմբուկի վերաբերյալ հանրային քննարկում անցկացնելը ճիշտ չէ:

*Տես էջ 2*

# Շուշեցի Նաիրա Ավետյանը՝ արդարության հետեւից



Արցախցի շատ պաշտոնյաներ, հիմնարկների ղեկավարներ այնքան համոզված են, որ լրագրողը, առհասարակ՝ հասարակ մահկանացուն իրենց պետք է չքննադատի, այնքան են սովորել միայն տոնից տոն խմբերով եկող լրագրողներին, որոնք հիացմունքով այ-օյ են անում Արցախի իսկապես գեղեցիկ տեղերը տեսնելով, ուտում են հյուրասիրվող ժինգյալով հացն ու Արցախի այլ յուրատեսակ ուտեստները ու, վերադառնալով, միայն փառաբանական նյութեր են գրում, որ այդ պաշտոնյաներից շատերի համար անսովոր է իրենց խոսքերը կամ արարքները կասկածի տակ առնող լրագրող տեսնելը: Մինչեւ հիմա ընդունված է եղել՝ Արցախի մասին միայն լավը կամ ոչինչ, սա պատերազմական եւ հետպատերազմական ժամանակներում աշխատող կարգախոս էր, որ հիմա, խաղաղ իր կյանքը կառուցող Արցախի համար պետք է մի կողմ դնել եւ ինչ կա՝ այն գրել, առանց շան տեղ դնելու Արցախի մասին բոլոր հրապարակումներին հետեւող, իրենց աչքի գերանը չտեսնող ու Արցախի մազը գերան շինող ադրբեջանական տեղեկատվական վայնասունը: Փաստորեն մինչեւ հիմա ընդունված վերը նշված սովորույթի պատճառով Արցախի չինովնիկներից շատերը իմունիտետ չունեն քննադատության հանդեպ եւ այս պարագայում նեղացածի ու թշնամացածի կերպարանք են ընդունում: Ընդ որում՝ լրագրողները ոչինչ, իրե՛նք իմունիտետ ունեն այդ կարգի պաշտոնյաների նկատմամբ, սակայն արցախցի սովորական մարդը այդպիսի «անսխալական» պաշտոնյաների ձեռքը երբեմն կրակն է ընկնում:

Մեզ, սակայն, հաճելի զարմանք պատճառեց շուշեցի մի կին, որը փորձում էր արդարություն որոնել եւ իր իրավունքները պաշտպանել՝ Արցախում երբեմն առկա ավանդական վախերը չինովնիկների հանդեպ չունենալով եւ դրանցով չբարդույթավորված: Նաիրա Ավետյանն առհասարակ շուշեցի կնոջ լավ օրինակի տիպար թվաց մեզ՝ միջին տարիքի, եռանդուն, ոչ մի բանից չհուսահատվող, նոր ձեռնարկներ սկսելու պատրաստ: Չնայած ֆինանսների բացակայությանը, նա տարի-տարվա վրա փորձում է կարգի բերել իր տան տարբեր սենյակները՝ դրանք հարմարեցնելով հյուրանոցային բիզնեսի համար: Դեռ չի կարողանում ամեն ինչ կարգավորել, բայց որդիների ու ամուսնու օգնությանը դիմելով փորձում է կամաց-կամաց նորոգել Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցի մոտ գտնվող իր տունը, Շուշիի կենտրոնից ոչ հեռու իր հարմար տունը. չէ՞ որ ասում են Շուշին զբոսաշրջության կենտրոն են դարձնելու, ինքն էլ արդեն պատրաստ է հյուրեր ընդունելու: Տիկին Նաիրայի եռանդը, չնայած առողջական խնդիրներին, շատ դուր եկավ մեզ, սա հակադրությունն էր այն շուշեցի կանանց համար, որ անընդհատ նայում են՝ ումից օգնություն ստանան, ո՞ր կազմակերպությունից մի բան իրենցով անեն: Սակայն ընդհանուր այն մտայնությունը, թե այստեղ պայքարելով ոչ մի բանի չես հասնի՝ փոքր քաղաք է, վերեւները ոնց որոշեն, այնպես կլինի, Նաիրայի համար չէ: Նա Շուշիի հիվանդանոցի հաշվապահն է եղել: Կրծքում ուռուցք հայտնաբերվեց՝ վիրահատեցին (2009 թվականի վերջին): Հիվանդության ընթացքը ձգվեց, սակայն նա այդ վիճակում տանը գործն անում էր: Այնուամենայնիվ, օգտվելով առիթից, հիվանդանոցի տնօրենը նրան ազատել է աշխատանքից, իսկ մինչ այդ՝ անցած տարվա մարտ եւ ապրիլ ամիսների բյուլետենը չի վճարել (պատճառաբանում էին, թե 120 օր վճարելուց հետո չպետք է վճարվի): Սակայն Նաիրայի հիվանդությունը ձգվել է, անգամ մի պահ ասել է՝ բյուլետենս վճարեք, դիմում կգրեմ-կազատվեմ: Սակայն տեսնելով, որ չեն վճարում, բյուլետենի օրերը վերջանալուց հետո նա ներկայանում է աշխատանքի, սակայն աշխատանքի է ներկայանում նաեւ նրան ժամանակավոր փոխարինած հաշվապահը, իսկ արդեն անցած տարվա հունիսի 10-ին նրան ասել են, որ ազատված է աշխատանքից: Նաիրան չհաշտվեց անօրինական ազատման եւ հատկապես բյուլետենի ոչ լրիվ վճարման դեմ, եւ հիմա դատարան է դիմել՝ նյութական եւ բարոյական փոխհատուցում պահանջելով: Ասում է՝ ոչինչ, մի քիչ կնյարդայնանա, բայց արդարությունը կվերականգնի:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ջանան Աթիլգանին

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Հարավային Կովկաս. Քաղաքական երկխոսություն» տարածաշրջանային ծրագրի նորանշանակ ղեկավար դր Ջանան Աթիլգանին: «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը գերմանական քաղաքական հիմնադրամ է, որն աջակցում է ժողովրդավարության, իրավական պետականության եւ սոցիալ-շուկայական տնտեսության զարգացմանը եւ ունի ավելի քան 70 գրասենյակներ ամբողջ աշխարհում:

Արթուր Բաղդասարյանն ընդգծել է Հայաստանի եւ գերմանական հիմնադրամի համագործակցությանը նոր թափ հաղորդելու անհրաժեշտությունը: Քննարկվել է տարածաշրջանի եւ ԵՄ անդամ երկրների հայտնի քաղաքական գործիչների մասնակցությամբ Կովկաս-Եվրոպա միջազգային քաղաքական ակումբի ստեղծման հեռանկարը:

Տիկին Աթիլգանը նշել է, որ պատրաստ է իր ներդրումն ունենալ համագործակցության հետագա խորացման գործում եւ մոտ ապագայում կոնկրետ քայլեր ձեռնարկել վերոնշյալ նախագծի մեկնարկի ուղղությամբ, որը նախատեսվում է իրականացնել հիմնադրամի աջակցությամբ:

# Մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ. «Սպիտակ ձեռքեր ունեմ»

*1-ին էջից*

«Եթե հանրային քննարկումներ անցկացվեին, չէին կառուցվի օպերայի շենքը, կառավարության շենքը, Էյֆելյան աշտարակը»: Նրա կարծիքով՝ թմբուկի կառուցման դեմ պրոֆեսիոնալ փաստարկ չկա: Դա ընդամենը մի քանի «հոգու կապրիզ է»: Աղմուկ բարձրացնողներից մեկն էլ երիտասարդ ճարտարապետ Սարհատ Պետրոսյանն է: Վերջինս Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի փեսան է: Սարգսյանը առանց անուն տալու, միայն նշելով նրա՝ Վազգեն Մանուկյանի փեսա լինելը, ասաց, որ «այդ տղան» առանձին զրույցներում խոստովանել է, որ սուտ է գրում: «Ես գիտեմ, թե նա ինչու է այդքան դեմ, բայց չեմ կարող ասել»:

Նարեկ Սարգսյանի գնահատմամբ՝ իր նախագծերը միշտ արժանանում են բացասական վերաբերմունքի, որովհետեւ գոյություն ունեն չարախոսություն ու նախանձ: «Անձնական հաշիվների բաղադրիչ կա: Երբ Հյուսիսային պողոտան էինք նախագծում, Ճարտարապետների միությունը դեմ էր, երբ առաջարկում էի ԱԺ ցանկապատը ապամոնտաժել եւ բակը դարձնել հանրային այգի, նրանք կրկին դեմ էին: Ես ինչ անում եմ՝ միությունը հակառակ **պոզիցիան** է ընդունում: Հետաքրքիր կլինի լսել, իսկ նրանք ի՞նչ են անում»: Սարգսյանի փոխանցմամբ՝ ինքը կամավոր հրաժարվել է ճարտարապետների միության անդամ լինելուց, ինչն էլ նպաստել է, որ ճարտարապետների մի մասն իր հանդեպ բացասական վերաբերմունք ունենա:

«**Ազգ**»-ի դիտարկմանը, որ Նարեկ Սարգսյանի նկատմամբ ոչ միայն ճարտարապետներն ունեն բացասական վերաբերմունք, այլեւ մտավորականները, բնապահպանները, իսկ երբ նա կրկին նշանակվեց մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ, հասարակական բողոքի ալիք բարձրացավ, որը հատկապես արտահայտվեց քաղաքապետի Facebook-ի էջում, Նարեկ Սարգսյանը նախ ասաց, որ չի ուզում պատասխանել այդ հարցին: Այնուհետեւ շարունակեց. «Դուք դեռ չեք ապացուցել, որ հասարակությունը բացասական վերաբերմունք ունի, եւ ուրեմն՝ այն հարցը, թե որտեղի՞ց է գալիս այդ բացասական վերաբերմունքը, անհիմն է: Ես բազմաթիվ մտավորական ընկերներ ունեմ, որոնք իմ կողքին են, այդ թվում՝ հանգուցյալ Աղասի Այվազյանը: Այս ամենի մեջ կա չարության, նախանձի բաղադրիչ», ասաց ճարտարապետը՝ հավելելով, որ չի հավատում Facebook -ում ծավալվող քննարկումներին:

Ճարտարապետների միությանը նա մեղադրեց անսկզբունքայնության մեջ, իսկ իր վերաբերյալ ասաց. «Ես պրոֆեսիոնալ ճարտարապետ եմ, սպիտակ ձեռքեր ունեմ եւ իմ լուման ունեմ Երեւանում վերջին 10 տարվա ընթացքում կատարված աշխատանքներում»:

*Հ. Գ. Հանդիպման ժամանակ գլխավոր ճարտարապետը չհերքեց, որ մտերիմ է նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հետ, ու նրանք հաճախ են հանդիպում:*

# Լ. Տեր-Պետրոսյան. «Թող ուրիշ հարիֆ գտնեն»

*1-ին էջից*

**Մրսածության պատճառով (իր ասելով) ձայնը այնքան էլ խրոխտ չհնչեցնող Լեւոն Զուրաբյանը նախ անդրադարձավ WikiLeaks-ի սենսացիոն բացահայտումներին՝ Հայաստանի 2008-ի ընտրությունների վերաբերյալ՝ Տեր-Պետրոսյանի ձայները շատ էին, ՍԴ որոշումը ճնշմամբ է եղել: Նա, այդ կայքի օգնությամբ մանր ժուլիկների է հայտնաբերել իշխանության մեջ, թե Սարկոզին չի ցանկացել շնորհավորել Սարգսյանին, կեղծ շնորհավորանք է թխվել,**



ՖՈՏՈԼՈՒՐ

**որ հետո ֆրանսիացիք չեն հերքել: «Հանրահավաքների մի ամբողջ արշավ ենք սկսելու, մի այնպիսի գագաթնակետի հասցնելով, որ իշխանությունը ստիպված լինի ընդունելու ժողովրդի հաղթանակը», իր մրսած լինելը մոռանալով՝ սկսեց գոռալ Լեւոն Զուրաբյանն իր ելույթի վերջում:**

**«Հանրապետության» Արամ Սարգսյանը իր էմոցիոնալ ելույթում ասաց, թե Հայաստանը փոփոխություն է ուզում: «Մեր ու ձեր պատկերացրած Հայաստանները տարբեր են, պարոնայք իշխանավորներ», ասաց ու զգուշացրեց. «Չտանեք ժողովրդին փորձության, հետդարձի եկեք»: Իսկ ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի ելույթը այս անգամ տեղի ունեցավ եւ ընդհանուր տրամադրությանը համահունչ էր:**

**Էմոցիան՝ էմոցիա, բայց իհարկե Տեր-Պետրոսյանի ելույթը պետք է որ տար հանրահավաքի մասնակիցներին հուզող հարցերի պատասխանը, ով անդրադառնալով փրկարար WikiLeaks-ին՝ մի շարք եզրակացություններով սնեց իր կողմնակիցներին:**

**Անցյալ նախագահական ընտրությունները չեղյալ համարելու համար բավական էր մի փաստ՝ այն, որ վարչապետի պաշտոնից արձակուրդ չի գնացել Սերժ Սարգսյանը, որի վերաբերյալ ՀԱԿ-ի բողոքը, սակայն, ՍԴ-ում մերժվել էր (Դավիթ Հարությունյանի հակափաստարկները ժանգլյորություն եւ աճպարարություն անվանեց, քանի որ ընտրական օրենսգիրքը գերակայություն ունի մյուս օրենքների նկատմամբ, մինչդեռ այդ իրողությունը այլ օրենքներով է մեկնաբանվել): Դիմելով WikiLeaks-ին եւ Փենինգտոնին, Տեր-Պետրոսյանը երկար բացատրեց ընտրական օրենսգրքի կոպիտ խախտումը՝ որ Սերժ Սարգսյանը վարչապետ էր մնացել, դա է հիմք հանդիսացել ընտրախախտումների համար, մի խոսքով, եթե-ապա՝ ընտրությունների ելքը այլ կլիներ: Ոչ թե դիտորդներն են տվել ընտրությունների գնահատականները, այլ նրանց երկրների կառավարությունները՝ աշխարհաքաղաքական նկատառումներով, եզրակացրեց Տեր-Պետրոսյանը, հավելելով, որ ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը իր խնդիրը չի կատարել. «Այսպիսի մարդիկ են մեզ ժողովրդավարություն սովորեցնում», քննադատեց Տեր-Պետրոսյանը ԵԱՀԿ-ին:**

**Ազգային ժողովին էլ բաժին հասավ, թե 76 պատգամավոր զբաղվում են ձեռնարկատիրությամբ: Եթե ձեռնարկատերը նույնիսկ հավատարմագրային կառավարման է հանձնել իր բիզնեսը, այդ դեպքում էլ նրան չի թույլատրվում մանդատ ունենալ: ԱԺ 58 տոկոսը բիզնեսով է զբաղվում, եւ 66 ձայնով ընդունված բոլոր օրենքները, ուրեմն, անվավեր են եւ պետք է չեղյալ համարել, ԱԺ-ն լոբբիստական, կոռուպցիոն կառույցի է վերածվել, եզրակացրեց Տեր-Պետրոսյանը: Նա ՍԴ-ին իր ողջ կազմով հրաժարական տալու կոչ արեց՝ որպես վերը նշած սահմանադրական այս ճչացող խախտման դեմ բողոքելով:**

**Հիմա հասանք ՀԱԿ-ի հետագա պահելաձեւին՝ էլի Տեր-Պետրոսյանի ներկայացմամբ. անհետաձգելի է սահմանադրական կարգի վերահաստատումը՝ WikiLeaks-ի հարեհաս հրապարակումների լույսի ներքո դա ակնհայտ է, Սերժ Սարգսյանն էլ չի ընտրվել, 8-12 տոկոս ձայն է պակասել: Իսկ թե ինչու է ԱՄՆ կառավարությունը թիկունք կանգնել չընտրված նախագահին, մեզ էլ ժողովրդավարության դասեր տվել՝ «դա չեմ էլ ուզում մեկնաբանել: ԱՄՆ-ն իմացել է , որ ՀՀ նախագահ գոյություն չունի»: Մի խոսքով՝ սահմանադրական կարգը վերահաստատելու հարցը երկխոսության միջոցով փորձող ՀԱԿ-ին ոստիկանական բռնություններն են խանգարել. «Կան քաղբանտարկյալներ, չկա երկխոսություն, չկան քաղբանտարկյալներ, կա երկխոսություն, թող ուրիշ հարիֆ գտնեն»: Այս խոսքերն ասելուց հետո Տեր-Պետրոսյանը նշեց, թե Տիգրան Առաքելյանին ազատ արձակելու դեպքում պատրաստ են վերադառնալ երկխոսության սեղանին, հակառակ դեպքում այլ լեզվով կխոսեն իշխանությունների հետ: Բայց այլ լեզուն բռնի հեղափոխությունը չէ, այլ հանրահավաքների ավելացմամբ արտահերթ ընտրությունների պարտադրումը: «Սկսել ա», երիտասարդական շարժման կարգախոսով ավարտեց Տեր-Պետրոսյանը՝ հաջորդ հանրահավաքը սեպտեմբերի 23-ին: Մնում է հասկանալ, թե արդյո՞ք հաջորդ հանրահավաքին գոնե երեկվա չափ մասնակից կգա, այլապես Տեր-Պետրոսյանի «պարտադրումը» էլի չի կայանա, ինչպես չի կայացել արդեն երեք տարի:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ոստիկանությունում կոռուպցիա է, բանակում՝ խոշտանգումներ, կալանավայրերն էլ գերբնակեցված են

«Խոշտանգումների ու անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոմիտեի CPT պատվիրակության կազմած 2010թ. զեկույցի եւ հիմնախնդիրների վերաբերյալ» քննարկումը երեկ սկսվեց մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ վերջերս բանակում սպանված զինծառայողներ Աղասի Աբրահամյանի եւ Հայկ Մկրտչյանի:

Տիգրան Օհանջանյան, Գեղամ Սերգոյան, Անդրանիկ Հայրապետյան, Արտակ Նազարյան, Անդրանիկ Սարգսյան: Նրանք խաղաղ պայմաններում բանակում զոհված այն զինվորներն են, որոնց մայրերն ու հարազատները հույսով դիմել են մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) **Կարեն Անդրեասյանին**, որպեսզի պարզվի սպանության պատճառն ու իրենց որդիներին սպանողները պատժվեն: Անդրեասյանի մեկնաբանությամբ՝ գուցե մյուսների ծնողները չեն դիմել, որովհետեւ արդեն կորցրել են հավատն ու վստահությունը: «Որպես մարդու իրավունքների պաշտպան ոչ միայն արտահայտում եմ մտահոգություն եւ խիստ անհանգստություն ամեն զոհված կամ ամեն բռնության ենթարկված զինվորի համար, այլեւ պահանջում եմ արդար քննություն, ինչը եղավ, օրինակ, «Եղնիկներում» կատարված դեպքի ժամանակ»: ՄԻՊ-ը պահանջ է ներկայացրել նախկինում կատարված սպանությունների բացահայտման գործում նույնպես քննություն սկսել:

Վեցամսյա գործունեության ընթացքում ՄԻՊ-ի գրասենյակը բանակի հետ կապված խնդիրներով 50 նամակ-դիմում է ստացել: Դրական լուծում ստացել է 26-ը: Նախորդ տարի խնդրի վերաբերյալ 30 նամակ էր ստացվել, որոնցից միայն 2-ին էր լուծում տրվել: 2005-ին օմբուդսմենի գրասենյակը ստացել է 62 դիմում: Եթե, օրինակ, 2007-ին բանակի վերաբերյալ 10 դիմում է ստացվել, ապա 2009-ին ստացվել է 51: Անդրեասյանը հավելեց, որ բանակի վերաբերյալ նամակներում չկան խոշտանգումների վերաբերյալ բողոքներ: Պաշտպանի գնահատմամբ՝ շատերը վախենում են արտահայտվել՝ համոզված լինելով, որ հետո իրենցից վրեժ կլուծեն:

Անդրադառնալով կալանավայրերի խնդրին ՄԻՊ-ն ասաց, որ դրանք գերբնակեցված են. դա պետության աղքատ վիճակի հետեւանք է: «Բազմաթիվ բանտարկյալներ պառկում են անմարդկային պայմաններում: Խցերը նեղ են, կան առնետներ, զգացվում է սատկած առնետների հոտը»:

Արդարադատության նախարարության ներկայացուցիչ **Նիկոլայ Ռուստամյանը** հետաքրքրվեց, թե ՄԻՊ-ը կոնկրետ որտե՞ղ է հանդիպել նման տեսարանի: «Երբ Նուբարաշենի ՔԿՀ-ում այցելության էի գնացել, ոտքերիս տակով առնետ է անցել», պարզաբանեց Անդրեասյանը:

«Հայաստանի հելսինկյան կոմիտեի» նախագահ **Ավետիք Իշխանյանի** գնահատմամբ՝ ազատազրկվածները չեն կարողանում օգտվել զանգերի, բժշկական ստուգում անցնելու եւ փաստաբան ունենալու իրավունքից, կամ էլ դա արվում է ոչ պատշաճ ձեւով: «Հաճախ կալանավորներին չի ասվում իրենց իրավունքների մասին, իսկ օտարերկրացիներին դա ասվում է նրանց համար անհասկանալի լեզվով: Բանտարկյալներին ժամանակին չեն հանում զբոսանքի եւ արգելում են երկարատեւ հանդիպումները», ասաց նա՝ հավելելով, որ բանտախցերում պետք է գործի «Մեկ բանտարկյալ մեկ մահճակալ» սկզբունքը:

Իշխանյանի փոխանցմամբ՝ բանտարկյալների միջեւ հիերարխիկ հարաբերություններ կան: Գոյություն ունի «զոն նայողը» հասկացությունը, որն էլ վերահսկում է տեղի կարգը: Երբ Իշխանյանը փորձել է ՔԿՀ-ներից ճշտել «զոն նայողի» վերաբերյալ հարցը, պատասխանել են, որ աշխատողների քիչ լինելու պատճառով ստիպված են նման քայլի դիմել՝ կարգուկանոն պահելու նպատակով:

ՄԻՊ-ը բացասական գնահատեց նաեւ ոստիկանության աշխատանքը: «Ոստիկանությունում շարունակվում են կոռուպցիան, բռնությունները, բացի դրանից՝ նրանք չեն համագործակցում ՄԻՊ գրասենյակի հետ: Երբ ասում ենք, առկա են կոռուպցիոն ռիսկեր, ասում են՝ իրականացնում ենք թրեյնինգներ: Ես չգիտեմ՝ այստեղ քանի հոգի է հավատում, որ կոռուպցիոն ռիսկերը կարելի է վերացնել թրեյնինգներով»:

Իշխանյանը հաստատեց, որ ոստիկանական բաժանմունքներում հաճախ են դիմում խոշտանգումների: «Ոստիկանական բաժանմունքներում հարցաքննությունները ուղեկցվում են ապտակներով, ոտքերին ռետինե մահակների հարվածներով, նաեւ ցելոֆանե տոպրակներով խեղդելով եւ էլեկտրահարումով»: Իշխանյանի մեկնաբանությամբ՝ պահանջ պետք է դրվի, որ հարցաքննությունները տեսաձայնագրվեն, եւ դրանք վարեն ոչ ավելի, քան երկու մարդ: Այս առաջարկությանը տեղական գերատեսչությունները չեն պատասխանել:

GPT նախորդ զեկույցի համեմատությամբ՝ 2010թ. 40%-ով ավելացել է բանտարկյալների թիվը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Խաչիկ Պ. Աստվածատուրյանի ծննդյան 165-ամյակը Հոնկոնգում

2011 թվականի սեպտեմբերի 8-ին՝ մեծանուն բարերար Խաչիկ Պողոս Աստվածատուրյանի (Պոլ Չաթերի) ծննդյան օրը, իր 165-ամյակի առիթով Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն վրդ. Հովհաննիսյանը եւ Կալկաթայի Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչությունը այցելեցին Հոնկոնգ, ուր իր հավիտենական հանգիստն է գտել նվիրյալ հայորդին ու մեծ երախտավորը:

Այցելուներն աղոթեցին Խ. Աստվածատուրյանի հոգու խաղաղության ու հանգստության համար, խնկարկեցին մեծ հայի անմահ հիշատակը, նրա շիրիմին Հայր Խորենը կատարեց հոգեհանգստյան արարողություն:

Խաչիկ Աստվածատուրյանը ծնվել է 1846 թվականի սեպտեմբերի 8-ին Կալկաթայում, մկրտվել տեղի Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցում: 18 տարեկանում հաստատվել է Հոնկոնգում ու անդուլ աշխատասիրությամբ ձեռք բերել մեծ հարստություն, դարձել Հոնկոնգի ժամանակի ամենաազդեցիկ մարդը: Շուրջ հիսուն տարի՝ 1876-1926-ը, ղեկավարել է Հոնկոնգի հաշտարար դատարանը, ավելի քան 40 տարի եղել է Հոնկոնգի գեներալ-նահանգապետի խորհրդականը, կղզու գործադիր եւ օրենսդիր խորհուրդների անդամ... 1902 թվականին Մեծ Բրիտանիայի թագավոր Էդվարդ VII-ից ստացել է ասպետի կոչում: Խաչիկ Պողոս Աստվածատուրյանի առջեւ բաց են եղել Բեքինգեմյան պալատի դռները:

Աստվածատուրյանը եղել է հնդկահայ համայնքի խոշոր բարերարը, նյութական օգնություն է ցուցաբերել Հնդկաստանի հայ եկեղեցիներին, կառուցել է Կալկաթայի հայկական ծերանոցը, Մեծ եղեռնից մազապուրծ հայերին օգնելու նպատակով Բրիտանիայում հիմնել է «Հայ գաղթականների բարեգործական հիմնադրամը»:

Մահացել է 1926 թվականին: Նրա կշիռն ու ազդեցությունն այնքան մեծ է եղել, որ մահվանից հետո ամիսներ շարունակ ցնցումներ են գրանցվել արժեթղթերի միջազգային շուկայում:

Հոնկոնգում այսօր էլ մեծ երախտավորի անունով կան բազում կառույցներ, մետրոյի կայարան, «Չաթերի այգի», «Չաթերի պողոտա», «Խաչիկի փողոց»:





ՏԱՐԵԴԱՐՁ

# Դիվանագետ, գիտնական, մանկավարժ

## *Արման Կիրակոսյանը 55 տարեկան է*



Այսօր լրանում է դիվանագետ, գիտնական եւ մանկավարժ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արման Կիրակոսյանի ծննդյան 55-ամյակը: Ու թեեւ 55 տարին «դասական» առումով հոբելյանական չէ, այդուհանդերձ, այս առիթը չեմ կարող չօգտագործել իմ վաղեմի բարեկամի մասին խոսք ասելու համար:

Նա ծնվել է հայ անվանի պատմաբան, քաղաքական հայագիտության ռահվիրա Ջոն Սահակի Կիրակոսյանի ընտանիքում: Մի մարդ, որն առաջինների թվում բարձրաձայնեց Հայոց ցեղասպանության հետ կապված շատ ու շատ պատմագիտական, քաղաքական, քաղաքագիտական խնդիրներ, համակողմանիորեն լուսաբանեց դրանք ժամանակի համար համարձակ, նույնիսկ, հանդուգն գրքերում: Մեր օրերում է, որ յուրաքանչյուրն իրեն ցեղասպանագետ է համարում, իսկ անցյալ դարի 60-80-ական թվականներին դրանով զբաղվելը շա՜տ դժվար էր, եթե չասենք՝ վտանգներով ու սպառնալիքներով լի:

Նախախնամություն չէ՞, արդյոք, որ 1975-85 թթ. Հայկական ԽՍՀ արտգործնախարարի զավակը 1991 թվականին առաջինների թվում էր, որը համալրեց Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությունը, դարձավ նախարարի առաջին տեղակալ, իսկ 1992-93 թթ. ղեկավարեց այդ գերատեսչությունը նախարարի պաշտոնակատարի կարգավիճակով:

Լինել անվանի մարդու զավակ Արման Կիրակոսյանի համար նշանակեց լինել նրա գործի ֆանատիկ նվիրյալն ու հետեւողական շարունակողը: Դրա ապացույցն ու հաստատումն են այն բազմաթիվ գրքերն ու հետազոտությունները, որոնց հեղինակն Արմանը դարձավ դեռ հոր կյանքի տարիներին:

Իսկ վերջերս Ա. Կիրակոսյանը երկարատեւ ու մեծագույն ջանքերի շնորհիվ ստեղծեց մի բացառիկ հաստատություն՝ Ջ. Կիրակոսյանի հուշաաշխատասենյակ-գրադարանը, ուր հավաքել է հոր գիտական, գրական ժառանգությունը՝ գրքերը, ձեռագրերը, լուսանկարները, գրադարանը, փաստաթղթերը, մի տեղ, ուր ակամա զգում ես լուսահոգի Ջոն Սահակովիչի ոգեղեն ներկայությունը, նրա մտքի թռիչքը, ոգու պոռթկումը եւ իր ժամանակի անարդարությունը...

Արման Կիրակոսյանը մեր 20-ամյա անկախ դիվանագիտության առաջամարտիկներից է: Ինչպես ասացի, նա առաջինների թվում է, որ կոչվեց ծառայության նորանկախ ՀՀ ԱԳՆ-ում: Նա առաջինն է այն 5 դիվանագետների թվում, ում 1992 թ. հուլիսի 25-ին ՀՀ նախագահի հրամանագրով շնորհվեց արտակարգ ու լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան: Նա առաջինն էր, որ մեր նորանկախ պետության դիվանագիտական ծառայության մեջ դարձավ (Հունաստանում) դիվանագիտական կորպուսի դուայեն (ավագ):

Հոբելյարի դիվանագիտական ուղին բեղմնավոր ու բազմազան է. նա 1994-99 թթ. աշխատել է ՀՀ դեսպան Հունաստանում եւ համատեղության կարգով՝ Խորվաթիայում, Կիպրոսում, Սլովենիայում, Հարավսլավիայում ու Ալբանիայում: 1999-2005 թթ. Ա. Կիրակոսյանը եղել է ՀՀ դեսպանն ԱՄՆ-ում եւ միաժամանակ 2001-05 թթ.՝ ՀՀ մշտական դիտորդ Ամերիկյան պետությունների կազմակերպությունում: 2005 թվականից Հայաստանի արտգործնախարարի տեղակալ է:

Լինելով թե՛ դիվանագետ, թե՛ գիտնական, Կիրակոսյանն անձնուրաց մանկավարժ է: Դասավանդելով Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, նա ուսանողությանն է մատուցում ոչ միայն գիտելիքներ, այլեւ գործնական տեղեկատվություն դիվանագիտական պրակտիկայից ու տեխնիկայից, շատ բաներ, որ ոչ մի դասագրքում չես կարդա: Պատահական չէ, որ դիվանագետն ընդգրկված է մայր բուհի՝ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած խորհրդի կազմում: Մանկավարժի կոչմանը նա վերաբերվում է իրեն բնորոշ բծախնդրությամբ ու պատասխանատվությամբ:

Քչերին է հայտնի, որ Կիրակոսյան դիվանագետն ու գիտնականը նաեւ երաժիշտ է, կոմպոզիտոր, վոկալիստ, մի շարք երգերի հեղինակ, ընդ որում՝ երաժշտությամբ սկսել է զբաղվել տակավին ուսանողական տարիներին, շարունակելով մինչեւ օրս:

Ազնվագույն, համեստ, ընտանիքի, ընկերությանն ու հայրենիքին անմնացորդ նվիրված անձնավորություն է իմ բարեկամը՝ Արման Ջոնի Կիրակոսյանը, ում միշտ վերաբերվել եմ հպարտությամբ ու ակնածանքով: Այս զգացմունքներով մաղթում եմ նրան դիվանագիտական, գիտական, մարդկային, անձնական նորանոր հաջողություններ իր կյանքի հետագա 55 տարիների ընթացքում:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

*«**Ազգ**»-ը միանում է շնորհավորանքին եւ բարեմաղթանքներին:*

## Միգրացիա

# ՌՀՄ փոխնախագահը՝ հայերի ՌԴ մեկնելու մասին

*ՀՀ-ից հայերի ՌԴ մեկնելը թելադրված է օբյեկտիվ պատճառներով: Հայաստանի միգրացիոն ծառայությունը պատրաստում է պետական կարգավորման հայեցակարգ: Մեծ ուշադրություն է դարձվում դեպի ՌԴ հայերի գաղթին: Վերջինիս պատճառներից մեկը, նրանց կարծիքով, հայրենակիցների կամավոր վերաբնակության ՌԴ պետծրագրի իրականացումն է: Այս կապակցությամբ Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) սոցիալական զարգացման եւ երիտասարդության գործերի գծով փոխնախագահ Լեւոն Մուքանյանը իր կարծիքն է արտահայտում ՌԴ ներգաղթի դաշնային ծառայության (ՆԴԾ) «Զեմլյակի» հանդեսին տված հարցազրույցում, որը թարգմանաբար ներկայացնում ենք ամբողջական տեքստով:*

**- Պարոն Մուքանյան, ՌՀՄ-ն ինչպիսի՞ հարաբերություններ ունի Հայաստանի եւ Ռուսաստանի ներգաղթի ծառայությունների հետ:**

- ՌՀՄ-ն պաշտոնական կապեր ունի ՀՀ կառավարության հետ: ՀՀ ներգաղթի ծառայության (ՆԾ) հետ առայժմ առանձին համակարգված կապեր չեն հաստատվել, քանի որ այդ կառույցը վերակազմավորված է ոչ վաղուց՝ 2009-ի դեկտեմբերին: ՌՀՄ-ն ՌԴ ՆԴԾ-ի հետ ձեւավորում է կառուցողական փոխգործողության հարաբերություններ, եւ մենք, որպես հասարակական կառույց, կանոնավորապես մասնակցում ենք ՆԴԾ հանրային խորհրդի նիստերին, որի կազմում ունենք ներկայացուցիչ, ինչպես նաեւ զանազան կոնֆերանսների, կլոր սեղանների եւ համանման այլ շփումների: Այդօրինակ գործունեությունն իրականացվում է ինչպես կենտրոնում դաշնային մակարդակով, այնպես էլ Ռուսաստանի տարածաշրջաններում:

**- Դուք ծանո՞թ եք Հայաստանում գոյություն ունեցող գաղթի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգին:**

- Հայաստանում գաղթի կարգավորման պետական հայեցակարգը հաստատվեց 2010-ին, եւ մենք պաշտպանում ենք այդ ոլորտի գործընթացները կարգավորելու ՀՀ կառավարության ձգտումը: Բնականաբար, Հայաստանը, ինչպես եւ աշխարհի ամեն մի երկիր, շահագրգռված չէ իր քաղաքացիների արտահոսքով: Չէ՞ որ մեկնում է բնակչության առավել գործունյա մասը: Եվ եթե նման երեւույթը ցանկալի չէ Ռուսաստանի նման հսկայական երկրի համար, ապա առավել եւս անթույլատրելի է Հայաստանի նման համեմատաբար քիչ բնակչություն ունեցող երկրի համար: Ուստի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ասել է, որ չնայած գոյություն ունեցող բոլոր խնդիրներին ու դժվարություններին, հանրապետությունում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, երբ մարդիկ չեն ձգտի մեկնել:

**- Հայաստանի նախագահն ինչպիսի՞ պայմաններ է առաջարկում ստեղծել երկրից հայերի արտահոսքը նվազեցնելու համար:**

- Ներկա իրավիճակը հասկանալի դարձնելու համար հարկ է ասել, որ Հայաստանի տնտեսական վիճակը ուղղակիորեն կապված է Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակման հետ, որը շարունակվում է արդեն 20 տարի: Վրաց-աբխազական հակամարտության պատճառով հյուսիսում փակ է նաեւ Հայաստանը Ռուսաստանին կապող երկաթուղին: Հարավում Իրանի հետ սահմանը բաց է, բայց բարձրլեռնային ավտոճանապարհը չափազանց բարդ է, իսկ Հայաստանի հիմնական տնտեսական գործընկերները, մասնավորապես Ռուսաստանը, հակառակ կողմում են: Այսինքն՝ միանգամայն բացակայում է Հայաստանի երկաթուղային հաղորդակցությունը ուրիշ երկրների հետ, իսկ, ինչպես հայտնի է, տարածաշրջանի տնտեսության մեջ դա շահութաբեր փոխադրումների հիմնական տեսակն է:

Այսպիսով, ներկա դրությամբ, հիմնական գործընկեր Ռուսաստանի հետ Հայաստանի կապն իրականացվում է ավտոմոբիլային փոխադրումներով՝ Վրաստանի տարածքով, ինչպես նաեւ Փոթի նավահանգստի լաստանավային փոխադրումներով: Անշուշտ, գոյություն ունեն նաեւ ավիափոխադրումներ, բայց տվյալ փոխադրամիջոցը թանկ արժե: Դրա հետեւանքով տրանսպորտային ծախսերը անչափ մեծ են, ինչը հանգեցնում է արտաքին շուկաներում հայկական ապրանքների թանկացմանը: Պարզ է, որ նման պայմաններում, ցավոք, դժվար է խոսել Հայաստանի տնտեսության զարգացման եւ այնտեղ աշխատատեղերի ստեղծման լուրջ հեռանկարների մասին: Երբ կարգավորվի լիարժեք ցամաքային հաղորդակցությունը, Հայաստանի տնտեսական աճն էլ էական կլինի: Չէ՞ որ աճն անհնար է առանց հայրենական ապրանքների արտադրության եւ արտահանման համար անհրաժեշտ հումքի ներկրման: Սրանք օբյեկտիվ պատճառներն են, բայց կան նաեւ սուբյեկտիվ պատճառներ: Վերոհիշյալից բացի՝ Հայաստանի նախագահը ուշադրությունը բեւեռում է երկրում տնտեսության այնպիսի ոլորտների զարգացման պայմանների ստեղծման անհրաժեշտության վրա, ինչպիսիք են պայքարը կաշառակերության դեմ, օրենսդրական բազայի, հարկային քաղաքականության բարելավումը եւ շատ այլ բաներ:

**- Հետեւաբար Հայաստանում բարձր է գործազրկության մակարդա՞կը:**

- Իմ կարծիքով, դա ասելը նշանակում է ոչինչ չասել: Երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, խզվեցին նաեւ տնտեսական կապերը: Հայաստանում տարբեր պատճառներով փաստորեն անգործության մատնվեցին 400-ից ավելի գործարաններ, որոնք կատարում էին բարձր տեխնոլոգիական պաշտպանական պատվերներ, անկում ապրեց քիմիական, թեթեւ, էլեկտրոնային արդյունաբերությունը: Տարբեր ճյուղերի բազմաթիվ բարձրորակ մասնագետներ մնացին անգործ եւ, բնականաբար, աշխատունակ բնակչության հիմնական մասը մեկնեց ուրիշ երկրներ: Հայերն աշխատասեր եւ ձեռներեց ժողովուրդ են, այդ հատկանիշը նրանց թույլ է տալիս աշխատանք գտնել փաստորեն ամեն մի երկրում:

**- Հայաստանի միգրացիոն ծառայության ծրագրում նախատեսվում է արտերկրում աշխատող ՀՀ քաղաքացիների պաշտպանություն: Բայց մի՞թե Ռուսաստանում նեղացնում են հայերին:**

- Երբ խոսում են արտերկրում ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին, խոսքը միայն Ռուսաստանի մասին չէ: Հայաստանցի աշխատանքային միգրանտներ կան Եվրոպայում, Ամերիկայում, Մերձավոր Արեւելքում եւ շատ ուրիշ երկրներում: Սեփական քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը յուրաքանչյուր պետության պարտականությունն է: Այսպիսով, միգրացիոն ծառայության ծրագրի տվյալ դրույթը ընդամենը կրկնորդում է սահմանադրության դրույթը:

Այո, Ռուսաստանում, որպես կանոն, հայերն օգտվում են իրենց հանդեպ բարեկամական վերաբերմունքից, բայց այստեղ եւս լինում են դեպքեր, երբ գործատուների մակարդակով խախտվում են աշխատանքային պայմանագրի դրույթները կամ որեւէ այլ ձեւով ոտնահարվում են գաղթյալի իրավունքները: Լավ է, երբ պետական կառույցները անտարբեր չեն արտերկրում հայրենակիցների ճակատագրի հանդեպ եւ հնարավորության սահմաններում ձգտում են օգնել նրանց: Այդ դեպքում քաղաքացիները եւս պետության հոգածության դիմաց վարձահատույց կլինեն երախտագիտությամբ:

Եթե Ռուսաստանն ու Հայաստանը հստակ պայմանավորվածություններ ունենան աշխատանքային միգրանտների հարցերի առնչությամբ, ապա, իմ կարծիքով, դա ոչ միայն կպաշտպանի հենց աշխատողների իրավունքները, այլեւ կհամապատասխանի Ռուսաստանի պետության շահերին: Մարդիկ միանգամայն օրինական կարգով կաշխատեն նրա տարածքում, կկատարեն օրենքները, կվճարեն հարկեր: Դա համապատասխանում է նաեւ Հայաստանի շահերին, քանի որ աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հետո մարդը կվերադառնա հայրենիք, իսկ Հայաստանի համար շատ կարեւոր է, որ մարդիկ մեկընդմիշտ չհեռանան երկրից:

**- Ծրագրում խոսվում է նաեւ այն մասին, որ կկատարելագործվի օտարերկրացիների պաշտպանությունը բուն Հայաստանում: Իսկ այնտեղ շա՞տ են աշխատանքային միգրանտները:**

- Հայաստան եւս աշխատանքային միգրանտներ են գալիս տարբեր երկրներից, բայց նրանք համեմատաբար քիչ են: Երկրում գործում են բազմաթիվ համատեղ եւ արտասահմանյան հիմնարկներ, որոնք մասնագիտացված կադրեր են ներգրավում դրսից, այդ թվում՝ Ռուսաստանից: Հայաստանում նաեւ գործում են ռուսական, ամերիկյան եւ եվրոպական առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր, որոնց շրջանավարտները ստանում են միջազգային չափանիշներին համապատասխանող դիպլոմներ: Դա հրապուրում է մեծ թվով օտարերկրացի ուսանողների. չէ՞ որ Հայաստանում ապրուստի եւ ուսման ծախսերը նկատելիորեն ցածր են մյուս երկրների համեմատությամբ: Թեեւ օտարերկրացիները միշտ էլ իրենց լավ են զգացել մեր երկրում, սակայն Հայաստանի օրենսդրական բազան օտարերկրացիների իրավունքների պաշտպանության ոլորտում մշտապես կատարելագործվում է՝ դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:



**- Հայաստանում կա՞ արդյոք օտարատյացություն:**

- Հայոց ցեղասպանության հետեւանքով 1915-ին եւ հետագա տարիներին հայ ժողովրդի զգալի մասը ցրվեց աշխարհով մեկ, ուստի հայերը մոտիկից գիտեն ուրիշ ժողովուրդների մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները: Հայերը հանգիստ են վերաբերվում ուրիշ արտաքին ունեցող, ուրիշ լեզուներով խոսող, ուրիշ սովորույթներ ունեցող մարդկանց: Այդ ամենը հայ ժողովրդի ավանդական հյուրասիրության հետ մեկտեղ միանգամայն հարմարավետ է դարձնում երկրում օտարերկրացու կեցությունը:

Բայց եթե վերացարկվենք կոնկրետ Հայաստանից եւ խոսենք ընդհանուր առմամբ, ապա օտարատյացության որոշակի աստիճան հավանաբար բնորոշ է ամեն մի հասարակության՝ ներքին պաշտպանության համար, ինչպես մարդու օրգանիզմի վարակամերժությունը (իմունիտետ): Վտանգ է ներկայացնում օտարատյացության՝ ծայրահեղականության վերաճող արմատական ձեւը, որը բացասական հետեւանքներ ունի բուն հասարակության համար, եւ դրա դեմ, անկասկած, հարկավոր է պայքարել:

**- Հայաստանի միգրացիոն պետ Գագիկ Եգանյանը հանդես է գալիս հայրենակիցների ընդունման ՌԴ պետծրագրի դեմ: Նրա կարծիքով, դա առաջացնում է Հայաստանի բնակչության անցանկալի արտահոսք: 4 տարում հանրապետությունը լքել է 780 ընտանիք: Ձեր կարծիքով, մեր ծրագրում կա՞ն արդյոք բացասական կողմեր: Ռուսաստան եկողները օգտվում են արտոնություններից: Ուրեմն ինչի՞ համար է քննադատությունը:**

- Ինձ թվում է, որ Հայաստանի միգրացիոն ծառայության պետ Գագիկ Եգանյանը հանդես է գալիս ոչ թե հայրենակիցների ընդունման ռուսական բուն պետծրագրի դեմ, այլ մտահոգված է ՀՀ-ից բնակիչների արտահոսքով: Ինչպես հայտնի է, Ռուսաստանը իրեն հայտարարել է ոչ թե ԽՍՀՄ իրավահաջորդ, այլ շարունակող, եւ հայրենակիցներ են համարվում ԽՍՀՄ-ում ծնված բոլոր մարդիկ: Ուստի Ռուսաստանը իրականացնում է բարեկամական երկրներից սեփական տարածաշրջաններ որակյալ աշխատուժ ներգրավելու ծրագիր: Իսկ եթե խոսենք Հայաստանի մասին, ապա, իմ կարծիքով, պատկերը հետեւյալն է. Հայաստանը երկրի բյուջեից միջոցներ է ծախսում, որպեսզի երեխաներն առողջ մեծանան, ոտքի կանգնեն, կրթություն ստանան, իսկ հետո, երբ մարդը դառնում է աշխատունակ եւ պատրաստ է անձամբ հարկեր վճարել երկրի բյուջեին, նա լքում է երկիրը, որպեսզի աշխատի եւ ապրի ուրիշ երկրում: Հայաստանի համար դա խիստ անցանկալի գործընթաց է. չէ՞ որ հանրապետության բնակչությունը մեծ չէ: Մյուս կողմից, ռուսական ծրագիրը առանձին վերցրած հայ ընտանիքին հնարավորություն է տալիս սնվելու եւ զարգանալու: Անհրաժեշտ է Հայաստանում պետական մակարդակով ստեղծել մեխանիզմ, որը քաղաքացիներին հնարավորություն կտա կազմակերպված ձեւով, աշխատանքային պայմանագրով մեկնել ուրիշ երկրներ եւ վերադառնալ ժամկետի ավարտից հետո: Այսինքն, ընդհանրական տեսակետից, Հայաստանի նման փոքր երկրից բնակչության անվերահսկելի արտահոսքը անչափ վտանգավոր է:

**- Դուք ասացիք որակյալ բանվորների մասին: Բայց այդ ծրագրով գալիս են բազմաթիվ թոշակառուներ, նրանք նույնպես օգտվում են ծրագրի արտոնություններից:**

- Նկատի ունենալով բնակչության սակավությունը, Հայաստանի համար կարեւոր է ամեն մարդ՝ երեխա, չափահաս, ծերունի: Ըստ երեւույթին, Գագիկ Եգանյանը խնդրին նայում է պետականակերտ տեսակետից: Սակայն առկա են բնակչության արտահոսքին նպաստող օբյեկտիվ հանգամանքներ: Եվ արժե, որ Հայաստանի պետական պաշտոնյաներն աշխատեն գաղթի պատճառների վերացման ուղղությամբ: Վերջիվերջո մարդիկ աշխատանք են գտնում, եւ դա գործազուրկ լինելուց անհամեմատ լավ է: Անշուշտ, նրանք աշխատում են Ռուսաստանում եւ հարկերն էլ այդ երկրին են վճարում, բայց չէ՞ որ վաստակած միջոցների մի մասը, որպես կանոն, ուղարկում են Հայաստան՝ հարազատներին, եւ երբ վերադառնում են հայրենիք, ծախսում են որոշակի դրամական միջոցներ: Արտերկրում աշխատող հայը զգալի չափով նպաստում է Հայաստանի տնտեսության գործունեությանը: Գաղտնիք չէ, որ փոխանցումների ընդհանուր գումարը գերազանցում է երկրի պետական բյուջեն: Հայերը երբեք չեն լքում իրենց մերձավորներին:

**- Սակայն հայրենակիցները դառնում են ՌԴ քաղաքացիներ:**

- Պետք է հիշեցնել, որ Ռուսաստանն ու Հայաստանը ռազմավարական դաշնակիցներ են, իսկ ՀԱՊԿ շրջանակներում նրանք ռազմական գործընկերներ են, եւ դա պատահական չէ: Դարեր շարունակ հայերն ու ռուսները կապված են եղել մտածելակերպի ընդհանրությամբ, հոգեւոր եւ մշակութային արժեքներով: Ռուսաստանում ապրող հայերը ծանրակշիռ ավանդ են ներդրել ռուսական պետականության կազմավորման մեջ, ինչը քանիցս հիշատակվել է Պետրոս Մեծի, Եկատերինա Երկրորդի եւ ուրիշ կայսրերի հրովարտակներում: Կարծում եմ՝ մեր սերունդը եւս ընդհանուր առմամբ հետեւում է այդ պանծալի ավանդույթներին:

**- Հայաստանի տարածքային կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանն ասում է, որ ՀՀ-ից արտագաղթելու պատճառները կապված են սոցիալ-տնտեսական դժվարությունների հետ (եկամուտների ցածր մակարդակ, աշխատատեղերի բացակայություն եւ այլն): Երեւի հարկավոր է այս առումով ինչ-որ բան ձեռնարկել:**

- Զրույցի սկզբում մենք արդեն հիշատակեցինք, որ Հայաստանի տնտեսական խնդիրները կապված են նախ եւ առաջ երկրի շրջափակման հետ: Շատ ձեռնարկություններ չեն գործում, վատ է զարգանում գործարարությունը, հետեւաբար չեն բացվում աշխատատեղեր: Բայց նույնիսկ այդ պայմաններում անհրաժեշտ է զարգացնել ենթակառույցը, պայքարել կաշառակերության դեմ, հատուկ պայմաններ ստեղծել փոքր ու միջակ ձեռնարկության զարգացման համար, երկիրն առավել գրավիչ դարձնել ներդրումների համար, ապահովել ներդրումների հուսալիությունը: Այստեղ անհրաժեշտ են համընդգրկուն, համակարգային եւ երկարաժամկետ միջոցներ:

**- Վերադառնանք հայրենակիցների կամավոր վերաբնակության ռուսական պետծրագրին: Դուք կո՞ղմ եք, որ այն գործի:**

- Նախկին ԽՍՀՄ երկրներից ՌԴ-ում հայրենակիցների կամավոր վերաբնակությանն աջակցելու պետական ծրագիրը ՌԴ կառավարության ճիշտ քաղաքականություն է: Նախ եւ առաջ, ժամանակին ռուսաստանցի բազմաթիվ մասնագետներ գործուղվում էին աշխատելու ԽՍՀՄ հանրապետություններում, որտեղ նրանք մնում եւ ապրում էին: Եվ լավ է, որ ՌԴ կառավարությունը հիմա նրանց ընձեռում է վերադառնալու հնարավորություն: Երկրորդ, ռուսական տարածքները հարկավոր է բնակեցնել բարեկամական, ոգով ու մշակույթով մերձավոր ժողովուրդներով. չէ՞ որ «սուրբ տեղը դատարկ չի մնում»: Վերաբնակության դեպքում ռուսական ծրագրի մասնակիցները ստանում են սոցիալական աջակցություն եւ պետական երաշխիք, բայց նրանք վերաբնակվում են կամ Ռուսաստանի համար ստրատեգիապես կարեւոր սահմանամերձ տարածքներում, կամ ներդրումային խոշոր նախագծերի տարածաշրջաններում, կամ էլ այնպիսի շրջաններում, որտեղ նկատվում է բնակչության թվի կրճատում: Ուստի Ռուսաստանի շահերի տեսակետից դա միանգամայն օրինաչափ եւ պահանջված ծրագիր է:

Բայց եթե տվյալ հարցը դիտարկենք Հայաստանի շահերի տեսակետից, ապա քաղաքացիների արտագաղթը, իհարկե, ցանկալի չէ: Ուստի պետք է այնպես անել, որ մեկնող մարդիկ չխզեն կապերը Հայաստանի հետ, եւ որ նորանոր մարդիկ չլքեն իրենց տները:

Ես վստահ եմ, որ ժամանակի ընթացքում իրավիճակը կբարեփոխվի, եւ Ռուսաստանի հայերի միությունը, ռուս-հայկական բարեկամության ամրապնդման մշտական ջանքերի հետ մեկտեղ, կնպաստի նաեւ այդ խնդրի լուծմանը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԼԻՄՈՎ
«Զեմլյակի» հանդես, ՌԴ ՆԴԾ
Թարգմ. Պ. Ք.

ԱԶԳ

# Միջազգային

## Բարեփոխումներն առաջին արդյունքներն են տալիս. Հայաստանը առավել մրցունակ է

Օրերս «Համաշխարհային տնտեսական ֆորում» անկախ միջազգային կազմակերպության հրապարակած հանրահայտ «Գլոբալ մրցունակություն, 2011-2012» զեկույցը փաստում է, որ 2010-ին Հայաստանի տնտեսության մրցունակության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 6 նիշով՝ աշխարհի 142 երկրների շարքում դասվելով 92-րդ տեղը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հուժկու վնաս կրած մեր տնտեսության համար սա առաջընթաց է ոչ միայն 2009-ի ճգնաժամային համարվող շեմի համեմատ, այլեւ նույնիսկ՝ նախաճգնաժամային 2006-2008 թվականների համեմատ:

Մրցունակությունը բնութագրվում է 12 հիմնարար գործոններով, որոնցից 10-ի դեպքում առաջընթաց կա: Այս գործոնների հիմքում տասնյակ ցուցանիշներ են: Այս ցուցանիշներից 73-ի գծով Հայաստանը առաջընթաց ունի, 25 ցուցանիշների գծով գրանցվել է նահանջ, իսկ մնացած ցուցանիշների գծով փոփոխություն չի գրանցվել:

Պետք է նկատել, որ դրական տեղաշարժ արձանագրած ցուցանիշներից 44-ի մասով տեղաշարժը տեղի է ունեցել 10 եւ ավելի դիրքով, իսկ վատթարացած ցուցանիշներից միայն 5-ն են, որ ունեցել են 10 եւ ավելի նվազում:

Այսինքն, թեեւ թվով քիչ, սակայն որոշ ցուցանիշներ խանգարել են Հայաստանին ավելի լավ դիրքում գտնվել: Հայաստանի դիրքի բարձրացումը կասեցրել են հիմնականում մակրոտնտեսական իրավիճակի գնահատականները, որում հատկապես մեծ դեր ունի գնաճի բարձր մակարդակը: Ըստ այդ ցուցանիշի Հայաստանի դիրքը նվազել է 41 նիշով եւ, ի տարբերություն 2008-2010 թվականների, հայտնվել ենք բավականին ցածր դիրքում՝ 119-րդ:

Հայաստանը բավականին նպաստավոր դիրքում է հատկապես առեւտրի տարիֆների, բիզնես սկսելու հետ կապված գործարքների ցուցանիշների գծով՝ զբաղեցնելով աշխարհում 35 եւ 34-րդ հորիզոնականները: Զգալի առաջընթաց է գրանցվել հատկապես կառավարության քաղաքականությունների թափանցիկության ցուցանիշների գծով՝ ի շնորհիվ 18 կետով բարելավման Հայաստանը աշխարհում 34-րդ դիրքում է: Զեկույցը փաստում է նաեւ Հայաստանում բջջային եւ ինտերնետային կապի մատչելիության էական բարելավումը:

Հայաստանը դեռ բավականին հետ է նորարարության եւ կատարելագործվածության ցուցանիշներով: Չնայած մեր դիրքերի որոշակի բարելավմանը, դեռ գտնվում ենք 110-րդ տեղում: Սրա վրա մեծ ազդեցություն ունեն հայաստանյան ձեռնարկությունների կողմից հետազոտությունների եւ նորարարության ուղղությամբ կատարվող ծախսերը, ինչպես նաեւ ակադեմիական ինստիտուտների եւ բիզնեսի թույլ համագործակցությունը:

Մաքսային ձեւակերպումների եւ գործընթացների դժվարությունները, հակամրցակցային օրենսդրության կիրառումը, արտաքին շուկաների մատչելիությունը, տեղական մրցակցության ինտենսիվությունը, շուկայում գերիշխող խմբերի առկայությունը մնում են Հայաստանի մրցունակության բարենպաստ դիրքը զսպող հիմնական ցուցանիշները: Այս առումով Հայաստանը զբաղեցնում է 127 եւ ավելի ցածր դիրքեր:

Առկա տեղեկատվությունը, կարծում ենք, բավարար է 2 կարեւոր դիտարկում անելու համար: Առաջին՝ Հայաստանի մրցունակության դիրքի բարելավումն իրականացված բարեփոխումների արդյունք է, որն արդեն դառնում է նկատելի: «Գլոբալ մրցունակություն, 2011-2012» զեկույցը այս իմաստով առաջինն էր, որ արձանագրեց առկա տեղաշարժը: Երկրորդ, բարեփոխումների շարունակականությունն անհրաժեշտություն է՝ այն կարող է բերել աշխարհում մեր դիրքերի զգալի բարելավման եւ ավելի լավ Հայաստանի:

Հ. Ս.

## Բան Կի Մունը կողմ է Պաղեստինի պետության ստեղծմանը



ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը երեկ հայտարարել է, որ ինքը հավանություն է տալիս Իսրայելի հետ խաղաղ գոյակցող Պաղեստինի պետության ստեղծմանը: Նրա խոսքերով, այդ պետությունը պետք է ստեղծվեր շատ տարիներ առաջ:

Կանբերայում (Ավստրալիա) կազմակերպված մամլո ասուլիսում Բան Կի Մունը միաժամանակ նշել է, որ ՄԱԿ-ում Պաղեստինի ճանաչման որոշումը իր լիազորություններից դուրս է: Այդ մասին հաղորդում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը: Գլխավոր քարտուղարի խոսքերով՝ յուրաքանչյուր երկրի կառավարություն պետք է ինքնուրույնաբար որոշում կայացնի տվյալ հարցի առթիվ:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը իր հերթին առաջին անգամ պաշտոնապես հայտարարել է, որ կօգտվի վետոյի իրավունքից, եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը փորձի միակողմանի կարգով ճանաչել Պաղեստինի պետությանը:

«Վաշինգտոն փոստ» թերթը հաղորդում է, որ համապատասխան հայտարարությամբ հանդես է եկել պետդեպարտամենտի մամլո քարտուղար Վիկտորիա Նուլանդը:

Վաշինգտոնը սխալ է համարում ՄԱԿ-ի օգնությամբ պետականության ճանաչմանը հասնելու պաղեստինցիների ձգտումը եւ այդ նպատակով սեպտեմբերի 8-ին նրանց սկսած արշավը: ԱՄՆ-ի կարծիքով՝ Պաղեստինը կարող է ստեղծվել միայն Իսրայելի հետ երկկողմ բանակցությունների միջոցով:

ՄԱԿ-ում Պաղեստինի ճանաչմանն ուղղված արշավին դեմ է նաեւ J-street ձախամետ հրեական լոբբին, հաղորդում է «Հաարեց» թերթը:

## Սիրիացի ընդդիմադիրները խնդրում են ուղարկել դիտորդներ

Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հակառակորդները հանդես են եկել օտարերկրացի դիտորդներ ուղարկելու խնդրանքով: Նրանց կարծիքով՝ դա թույլ կտա վերջ դնել բնակչության նկատմամբ կիրառվող բռնություններին: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ նման դիմումով հանդես է եկել ընդդիմադիրներին միավորող Սիրիական գլխավոր հեղափոխական հանձնաժողովը:

Ֆրանսպրեսի տվյալներով, ընդդիմադիր դաշինքը մասնավորապես ՄԱԿ-ից խնդրել է Սիրիայի տարածքում հիմնել իրավապաշտպան առաքելություն, ինչպես նաեւ պահանջել է ապահովել օտարերկրյա լրատվամիջոցների ներկայությունը: Հանձնաժողովն առաջարկել է համագործակցությունից իշխանությունների հրաժարման դեպքում ձեռնարկել ավելի կոշտ միջոցներ՝ ընդհուպ Սիրիայի երկնքում թռիչքազերծ գոտու հաստատումը:

Հանձնաժողովի հայտարարությունը ընդունվել է ընդդիմության կենտրոններից մեկում՝ Հոմս քաղաքում, կառավարական զորքերի իրականացրած հատուկ գործողության հաջորդ օրը: Տարբեր տեղեկությունների համաձայն, «մաքրման» գործողության ընթացքում սպանվել է 27-29 զինված եւ անզեն ընդդիմադիր: Սիրիացի զինվորականները հինգշաբթի օրը մեկ ուրիշ գործողություն են իրականացրել Իբրին գյուղում, որն ուղղված էր առաջին հերթին դասալիքների դեմ:

Օտար պետությունները խստիվ քննադատում են Սիրիայի իշխանությունների գործողությունները: Դամասկոսի ավանդական հակառակորդ ԱՄՆ-ից բացի, Սիրիայում տեղի ունեցող բռնությունների կապակցությամբ մտահոգություն է հայտնել նույնիսկ դաշնակից Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:

Հակամարտ կողմերի հաշտեցմանն ուղղված ջանքեր է ձեռնարկում Ռուսաստանը: «Կոմերսանտ» թերթը հաղորդում է, որ հինգշաբթի օրը սիրիացի ընդդիմադիրների մի պատվիրակություն Մոսկվա է ժամանել հանդիպելու Դաշնության խորհրդի միջազգային գործերի կոմիտեի նախագահ Միխայիլ Մարգելովի հետ: Առաջիկա երկուշաբթի Ռուսաստան կժամանի Բաշար Ասադի քաղաքական եւ տեղեկատվական հարցերի գծերով խորհրդական Բութայնա Շաաբանը:

Միաժամանակ հակամարտության կարգավորմանն ուղղված առաջարկություններ է նախապատրաստում Արաբական պետությունների լիգան, որի գլխավոր քարտուղար Նաբիլ ալ Արաբին մոտ օրերս կայցելի Դամասկոս:

Պ. Ք.

### ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՈՒՄ

## Թուրքիան սկսել է «Բարբարոսա» ծրագրի իրագործումը



Թուրքիայի զինվորական հրամանատարությունը մշակել է ռազմածովային նոր ռազմավարություն, որը կոչվում է «Բարբարոսա գործողություն-Էգեյան վահան», գրում է «Սաբահ» թերթը:

Ռազմավարության շրջանակներում թուրքական նավատորմը իր ուժերի մի մասը Սեւ եւ Մարմարա ծովերից տեղափոխում է Արեւելյան Միջերկրածովք: Զգալի ուժեր կկուտակվեն Կիպրոսի եւ Իսրայելի ափերի մոտ (երկու ֆրեգատ, երկու կորվետ, մի քանի պահականավ եւ հրթիռային նավակ, ինչպես նաեւ օժանդակ նավեր):

Վարչապետ Էրդողանը քաթարյան «Ալ Ջազիրա» հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է, որ ռազմանավերին հրամայել է ուղեկցել Գազայի հատված մարդասիրական բեռներ տանող թուրքական նավերին: «Եթե միջազգային ջրերում նոր նավատորմիղը հարձակման ենթարկվի, ապա մեր զինծառայողները մարտի կբռնվեն», ավելացրել է նա:

Ծովուժի խմբավորմանը օդից կպաշտպանեն F-16 նորագույն կործանիչները, որոնց ռազմակայանները Կոնիա եւ Իզմիր քաղաքների մոտակայքում են:

Բացի դրանից, թուրքական ռազմանավերը եւ օժանդակ նավերը մշտական մարտական հերթապահություն կիրականացնեն Ադրիատիկ եւ Կարմիր ծովերում, ինչպես նաեւ Հնդկական օվկիանոսում:

Մերձավորարեւելյան տարածաշրջանում պարեկություն կանեն 4 ֆրեգատ եւ 1 օժանդակ նավ հատուկ ջոկատներով:

Թե ուր են մեկնելու թուրքական 14 սուզանավերը, առայժմ չի հաղորդվում:

Թուրքիայի կառավարությունը «Բարբարոսա» ծրագիրն ընդունեց Իսրայելի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացումից հետո, որի առիթը 2010-ի մայիսի դեպքերին առնչվող ՄԱԿ-ի զեկուցագրի հրապարակումն է: Այն ժամանակ դեպի Գազայի հատված մեկնած «Ազատության նավատորմիղի» թուրքական նավի վրա իսրայելցի զինծառայողների հարձակման ընթացքում սպանվել էին 9 թուրք ակտիվիստներ:

## Ջրհեղեղ ԱՄՆ-ի արեւելքում, հրդեհներ Տեխասում

Նախագահ Բարաք Օբաման սեպտեմբերի 9-ի առավոտյան սաստիկ հեղեղումների պատճառով արտակարգ դրություն է հայտարարել Նյու Յորքի եւ Փենսիլվանիայի նահանգներում, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

«Լի» ծովամրրիկը անձրեւներ է բերել արեւելյան ափ, որն ավելի վաղ հեղեղվել էր «Այրին» ծովամրրիկի հետեւանքով: Սեպտեմբերի 8-ին տեղատարափ անձրեւների պատճառով իշխանությունները տարհանել են ավելի քան 100.000 մարդու: Կա հինգ զոհ:

ԱՄՆ Օդերեւութաբանության ազգային գրասենյակը նախազգուշացրել է, որ Նյու Յորքի, Նյու Ջերսիի, Փենսիլվանիայի, Կոնեկտիկուտի, Մերիլենդի եւ Վիրջինիայի նահանգների մի շարք շրջաններում սպասվում են հեղեղումներ: Օդերեւութաբանների տվյալներով, միայն հինգշաբթի օրը երկրի հյուսիս-արեւելքում տեղումները կազմել են 150-250 մմ: Շատ քաղաքներում ջուրը ծածկել է փողոցներն ու խճուղիները, հաղորդվում է էլեկտրամատակարարման ընդհատումների մասին:

Արտակարգ դրության ռեժիմի կապակցությամբ կազմ ու պատրաստ վիճակի են բերվել Ազգային անվտանգության դեպարտամենտի եւ Արտակարգ իրավիճակների դաշնային գործակալության ստորաբաժանումները:

Ավելի վաղ «Լի» ծովամրրիկն անցել էր Մեքսիկական ծոցի ափով, հեղեղելով ԱՄՆ հարավային եւ հարավ-արեւելյան որոշ շրջաններ: Տասնյակ քաղաքներում ջրի մակարդակը հասել էր 2 մետրի, սակայն հաջողվել էր խուսափել նշանակալի ավերածություններից: Մեքսիկական ծոցում «Լի» ծովամրրիկի պատճառով տարհանվել էին նավթահանույթի եւ գազահանույթի 237 հարթակների անձնակազմերը:

«Լի» ծովամրրիկի սաստիկ քամին Տեխասի եւ Օկլահոմայի նահանգներում չորային եղանակի պայմաններում զանգվածային հրդեհներ է առաջացրել: Ասոշիեյթեդ պրեսի տվյալներով, Տեխասի տարբեր շրջաններում անտառային հրդեհների հետեւանքով այրվել է 1400 տուն, զոհվել է 2 մարդ:

## Քադդաֆին հետը տարել է 29 տոննա ոսկի



Լիբիական նախկին առաջնորդ Մուամմար Քադդաֆին Տրիպոլիից հեռանալիս հետը տարել է 29 տոննա ոսկի, որի ընդհանուր արժեքը մոտ 1 մլրդ դոլար է: ԱԱԽ պաշտոնյաների խոսքերով՝ մետաղի մի մասը վաճառվել է կառավարական պաշտոնյաների աշխատավարձերի վճարման նպատակով, մի մասն էլ տեղափոխվել է հարեւան Նիգեր: Այդ մասին հաղորդում է «Ռոսիա-24» հեռուստաալիքը:

Քադդաֆիի որոնումներով զբաղված է մի քանի հատուկ ջոկատ: Լիբիայի նոր իշխանությունները ստեղծել են մարտական հատուկ ստորաբաժանում, որի խնդիրն է բռնել երկրի տապալված ղեկավարին, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Լիբիական բանակի պաշտոնական ներկայացուցիչ Անիս Շարիֆի խոսքերով՝ ապստամբներին հայտնի է, թե Քադդաֆիին ինչպես է հաջողվում թաքնվել: «Նա տեղաշարժվում է ավտոմեքենաների փոքր շարասյունով, որպեսզի չգրավի ՆԱՏՕ-ի կամ ապստամբների ուշադրությունը: Նա ջանում է նույն տեղում երկու-երեք ժամից ավելի չմնալ», պնդում է Շարիֆը:

Ասոշիեյթեդ պրեսի տվյալներով, Քադդաֆիի որոնման գործում ԱԱԽ-ին ամենից շատ օգնում են ֆրանսիացի մասնագետները: Նրանք փորձում են հետեւել կասկածելի հեռախոսազանգերին եւ պարզել դրանց ծագումը: Շուտով որոնումներին կմիանան նաեւ ԿՀՎ աշխատակիցները:

ՕԳՆԵՆՔ

# Հովհաննես Գրիգորյան



Հայ ժամանակակից գրականության հայտնի եւ սիրված անուններից է Հովհաննես Գրիգորյանը, նրա գեղարվեստական մտածողության ամենաբնորոշ գիծը բանաստեղծական պատկերավորման ինքնատիպությունն ու անսովորությունն է, խոսքի լակոնիզմը: Լինելով 60-ականների խորհրդային շրջանի գեղագիտական շարժման բանաստեղծական սերնդի առաջատարներից` իր անդրանիկ ժողովածուով գրական աշխարհ նա նոր, թարմ հոսանք բերեց` պահպանելով այն իր ստեղծագործության բոլոր փուլերում: Հովհ. Գրիգորյանը իրավամբ համարվում է բանաստեղծական արվեստի նորարարության ջատագով, մշտապես եղել եւ շարունակում է հետեւել նոր սերնդի բանաստեղծական որոնումներին, գրական շարժումներին եւ հոսանքներին: Նա հեղինակ է բանաստեղծական բազմաթիվ ժողովածուների, որոնցում ժամանակակից պոետի եւ քաղաքացու անջնջելի դիմագիծ է կերտված: Նրա գրչին հատուկ են ինչպես մեղմ քնարականությունը, քաղաքային կյանքի խստաշունչ պատկերավորումները, նաեւ բարեմիտ հումորը, երբեմն` անխնա սատիրան:

Հովհ. Գրիգորյանը հիմնադիրն է «Գրեթերթ» երիտասարդական պարբերականի, աշխատում է «Ցոլքեր» հանդեսի պատանի ստեղծագործողների հետ: Դիտողունակ ու սուր հայացքը շատ արագ է ի հայտ է բերում երիտասարդ շնորհալիներին, տաղանդավորներին:

Հովհաննես Գրիգորյանի` ստորեւ ներկայացվող 3 բանաստեղծությունները իր փոքրիկ Հայաստան երկրի ներկա օրերի տագնապների սիրո գողտրիկ արձագանքներ են:

**Ս. Բ.**

### *Եվ ի՞նչ աներ Աստված*

*Եվ Աստված ցանկացավ գրել*
*Ե Ր Ջ Ա Ն Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն*
*քո տարածքի վրա ծայրեծայր,*
*բայց բառն այդ շատ էր երկար*
*ու չտեղավորվեց քո փոքրիկ*
*հողի վրա...*
*Եվ Աստված ցանկացավ գրել*
*Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն*
*բայց, ավաղ,*
*այդ բառն էլ դարձյալ*
*շատ երկար էր*
*ու կեսն անգամ չտեղավորվեց*
*քո*
*քո փոքրիկ հողի վրա...*
*Եվ ի՞նչ աներ Աստված,*
*որ լոկ ՅԱՎ-ն եկավ հարմար,*
*որ լոկ ՍՈՒԳ-ն եկավ հարմար,*
*որ լոկ ԼԱՑ-ն եկավ հարմար*
*քո փոքրիկ հողի համար...*

### *Աղոթք*

*Ջորու քայլ վեր... սահման է:*
*Ջորու քայլ վար... սահման:*
*Աստված իմ,*
*այսքան էլ փոքրիկ հայրենիք,*
*այսքան էլ փոքրիկ*
*Հայաստան,*
*նորածնի բարուր է իսկական...*
*Նորածնի բարուրը գրկել եմ,*
*Աստված իմ, մոլորվել,*
*կանգնել եմ.*

*ասա ինձ, ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ-*
*Ջորու քայլ վեր` ավեր է ու մահ է,*
*Ջորու քայլ վար` ավար ու թալան...*

### *Հայաստան*

*Սա իմ երկիրն է–չափսերով*
*այնպիսին,*
*որ կարող եմ վերցնել հետս,*
*թե մի հեռու տեղ գնամ:*
*Փոքրիկ` ինչպես ծերացած մայր,*
*Փոքրիկ` ինչպես*
*նորածին զավակ,*
*Իսկ քարտեզի վրա*
*ընդամենը մի արցունքի կաթիլ...*
*Սա իմ երկիրն է–չափսերով*
*այնպիսին,*
*որ ազատորեն տեղավորել եմ*
*սրտիս մեջ,*
*որ չկորցնեմ հանկարծ...*

# Բաց նամակ ՀՀ նախագահին

Մեծարգո՛ նախագահ,

Անկախության շրջանի հայ լավագույն բանաստեղծներից մեկի` ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ մոտ հայտնաբերվել է թոքի քաղցկեղ: Նրա կյանքը հնարավոր է փրկել միայն բարդ վիրահատական միջամտությամբ, որը կարող է իրականացվել միայն Գերմանիայում եւ կապված է ֆինանսական մեծ միջոցների հետ (50 000 ԱՄՆ դոլար):

Տաղանդավոր բանաստեղծի կյանքը փրկելու համար անհրաժեշտ է Ձեր բարձր հովանավորությունը: Հուսով ենք, որ մեր պետության համար հոբելյանական այս տարում, այս տոնական օրերին Ձեր հոգատար ու սրտացավ վերաբերմունքի շնորհիվ կհաջողվի փրկել անկախ պետականության շրջանի լավագույն բանաստեղծներից մեկի կյանքը:

Հայոց անկախ պետականության գոյության պայմաններում մենք իրավունք չունենք թույլ տալ այդպիսի կորուստ: Ժամանակն է, որ այլեւս չհամալրվի անտարբերության հետեւանքով վաղաժամ կյանքից հեռացած հայ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ տխուր ցանկը:

Ձեր օժանդակությամբ Դուք փրկում եք ոչ միայն Հովհաննես Գրիգորյանի կյանքը, այլեւ մեծ ծառայություն եք մատուցում հայ մշակույթին ու գրականությանը:

Ակնկալում ենք Ձեր արագ արձագանքը, որովհետեւ ամեն վայրկյանը կարող է ճակատագրական լինել:

**«Օգնենք Հովհաննես Գրիգորյանին» հանգանակության նախաձեռնող խումբ (գրողներ, գրականագետներ)**

# Օգնենք փրկել բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի կյանքը

Հայ ժամանակակից հանրահայտ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի մոտ հայտնաբերվել է թոքի քաղցկեղ: Նրան հնարավոր է փրկել միայն գերմանական կլինիկաներից մեկում: Բուժումն արժե 50 000 դոլար: Մեզ անհրաժեշտ է բոլորի օգնությունը: Որեւէ չափի օգնություն խիստ կարեւոր է մեզ համար:

Հեռախոս` 56 41 42, 094 49 76 01
Հաշվեհամարներ` (ՊրոԿրեդիտ բանկ) AMD 253090017430- 0090
$ 253090017455-0091 EUR 253090017448- 0092

# Ազգային կինոյի մրցանակաբաշխություն 2012-ի փետրվարին

**Երեւան, 9 սեպտեմբերի, 2011թ.:** Այսօր Հայաստանի ազգային կինոկենտրոնը, «Orange Արմենիա» ընկերությունը եւ Ազգային կինոյի զարգացման հիմնադրամը հայտարարեցին Ազգային կինոյի ամենամյա մրցանակաբաշխություն հիմնելու իրենց նախաձեռնության մասին: Այն միտված է խթանելու եւ զարգացնելու ազգային կինոարտադրությանը, նոր անունների բացահայտմանը, հայ հանդիսատեսին կինոթատրոններ վերադարձնելուն, երկրի կինոգործիչներին համախմբելուն, կինոարտադրության նոր նախագծերին օժանդակելուն, ազգային կինոարտադրության լավագույն ավանդույթները պահպանելուն:



«Կինոն Orange-ի հովանավորչական գործունեության կարեւորագույն ոլորտներից է: Հայաստանում արդեն վեց ամսից ավելի գործում է Orange Կինո աննախադեպ ծառայությունը, որի նպատակն է աշխուժացնել կինոյի նկատմամբ հետաքրքրությունը, ինչն այսօր օրեցօր ավելի ակնհայտ է դառնում: Orange-ն ունի նաեւ կինոյին աջակցելու մեծ միջազգային փորձ. մեր ընկերությունն արդեն ավելի քան տասը տարի Կաննի միջազգային կինոփառատոնի եւ արդեն վեց տարի` բրիտանական BAFTA-ի պաշտոնական գործընկերն է: Հայկական կինոն ունի հարուստ ավանդույթներ ու լուրջ դպրոց, եւ մենք երջանիկ ենք լինել այս մրցանակաբաշխության պաշտոնական գործընկերը առաջին իսկ տարվանից, քանի որ հավատում ենք հայկական կինոյի լուսավոր ապագային», ասաց Orange-ի Մարքեթինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Մրցանակաբաշխության` կինոյի եւ մշակույթի անվանի գործիչներից կազմված ժյուրին Ազգային կինոյի մրցանակը կշնորհի երկու քվեարկության արդյունքում: Առաջին փուլում, յուրաքանչյուր անվանակարգի համար, ժյուրիի կողմից կընտրվեն 2-3 ֆիլմեր: Երկրորդ փուլում կորոշվեն մրցանակակիրները:

Ազգային կինոյի մրցանակաբաշխության մրցանակները կշնորհվեն 12 անվանակարգերում, այդ թվում` լավագույն գեղարվեստական ֆիլմ, լավագույն ռեժիսոր, լավագույն օպերատոր, լավագույն սցենարիստ, լավագույն նկարիչ, լավագույն երաժշտություն, լավագույն գլխավոր կնոջ դերակատար, լավագույն տղամարդու դերակատար, լավագույն կարճամետրաժ ֆիլմ, լավագույն վավերագրական ֆիլմ, լավագույն անիմացիոն ֆիլմ, լավագույն դեբյուտ կամ տարվա հայտնություն: Բացի հիմնական անվանակարգերից` կշնորհվի նաեւ մեկ հատուկ մրցանակ` հայկական կինոյի զարգացման գործում ունեցած ավանդի համար:

Յուրաքանչյուր տարի Ազգային կինոյի մրցանակաբաշխության ժամանակ ժյուրին կգնահատի նախորդ տարվա ընթացքում նկարահանված ֆիլմերը: Բացառություն կկազմի միայն առաջին մրցանակաբաշխությունը, որը կամփոփի անկախ Հայաստանի առաջին 20 տարիների կինոարտադրությունը:

Մրցանակաբաշխության կանոնակարգի համաձայն` առաջին մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել միայն Հայաստանում` 1991-2011 թթ. ընկած ժամանակահատվածում արտադրված ֆիլմերը: Արդեն հաջորդ տարիներին կինոմրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ոչ միայն ՀՀ-ում արտադրված, այլ նաեւ արտերկրում հայկական թեմաներով եւ հայ ռեժիսորների կողմից նկարահանված ֆիլմեր:

Մրցանակաբաշխության ժյուրին կազմված է 11 անդամներից: Յուրաքանչյուր անվանակարգին վերաբերող որոշումը կընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկությունը գաղտնի է: Ժյուրիի նախագահը կողմ եւ դեմ հավասար ձայների դեպքում վճռական ձայնի իրավունք ունի: Կանոնակարգի համաձայն` եթե ժյուրիի որեւէ անդամ մասնակցություն է ունեցել մրցույթին ներկայացված ֆիլմերից որեւէ մեկի ստեղծմանը, ապա իրավունք չունի քվեարկելու տվյալ անվանակարգի համար:

Բոլոր մրցանակակիրները կստանան մրցանակ եւ դիպլոմ:

Մրցույթին մասնակցելու համար ֆիլմերը պետք է ներկայացնել Հայաստանի ազգային կինոկենտրոն սույն թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը ներառյալ:

Կազմակերպիչների որոշմամբ, Ազգային կինոյի մրցանակաբաշխության մրցանակի նախագծի եւ լոգոյի համար կհայտարարվի մրցույթ:

Առաջիկայում Ազգային մրցանակաբաշխությունը կունենա նաեւ իր վեբ-կայքը, որտեղ կզետեղվեն միջոցառման հետ կապված բոլոր նորություններն ու տեղեկությունները:

# Գաֆեսճեան արվեստի կենտրոնում այսօր կբացվի «Վիկտոր Վազարելի. Օպտիկական հեռանկարներ» ցուցահանդեսը

**Սեպտեմբերի 10-ին Գաֆեսճեան արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահում կբացվի «Վիկտոր Վազարելի. Օպտիկական հեռանկարներ» ցուցահանդեսը: Ցուցահանդեսում ներկայացված 44 ստեղծագործությունները պատկանում են Ջերարդ Լ. Գաֆեսճեան հավաքածուին.**

**«Արծիվ» սրահն այդ օրն իր դռները կբացի այցելուների համար ժամը 10.00-ին: Սրահի մուտքն ամբողջ օրվա ընթացքում կլինի անվճար:**

**«Այս ցուցադրությամբ մենք հայ հանդիսատեսին ենք ներկայացնում համաշխարհային հռչակ ունեցող, օպ-արտի (օպտիկական արվեստի) հիմնադիր Վիկտոր Վազարելիին: Գաֆեսճեան արվեստի կենտրոնը շարունակում է ակտիվորեն ներկայացնել ժամանակակից արվեստն իր ողջ բազմազանությամբ»,- նշեց Գաֆեսճեան արվեստի կենտրոնի գործադիր տնօրենի պաշտոնակատար Վահագն Մարաբյանը:**

**Նա հայտնեց նաեւ, որ «Վիկտոր Վազարելի. Օպտիկական հեռանկարներ» ցուցահանդեսի շրջանակներում կգործի երկու կրթական ծրագիր: «Օպ-արտ. Գույնի եւ ձեւի փոխակերպումներ» ծրագիրը նախատեսված է 5-11 տարեկան երեխաների համար, մինչդեռ «Տպագրական արվեստի ներածություն» ծրագրին կարող են մասնակցել նաեւ դեռահասները եւ երիտասարդները: «Ծրագրերի նպատակն է` նպաստել Վազարելիի բազմակողմանի արվեստի բացահայտմանը, զարգացնել երեխաների ստեղծագործական միտքը, ինչպես նաեւ ներկայացնել տպագրությունն իբրեւ արվեստի տեսակ», - հավելեց Վ. Մարաբյանը:**

**Առաջին «Օպ-արտ. Գույնի եւ ձեւի փոխակերպումներ» ծրագիրը տեղի կունենա հենց ցուցահանդեսի բացման օրը` սեպտեմբերի 10-ին, ժ. 12.00-ին:**

**Ինչպես հայտնեց Գաֆեսճեան արվեստի կենտրոնի ղեկավար Վահագն Մարաբյանը, սեպտեմբերի 10-ին ցուցահանդեսի բացումը կզուգորդվի նաեւ «Հանդիպում արվեստի հետ» շարքի հերթական միջոցառմամբ: Այս անգամ այն կբացահայտի օպ-արտն` իբրեւ ժամանակակից արվեստի յուրահատուկ դրսեւորում: Միջոցառումը կներառի շրջայց ցուցասրահում, Վիկտոր Վազարելի. Օպտիկական հեռանկարներ ցուցադրության զուգահեր անցկացվող կրթական ծրագրերի ներկայացում: Այնուհետեւ արվեստաբան Լիլիթ Սարգսյանը կներկայացնի օպ-արտ ուղղությունը:**

**20-րդ դարի արվեստի ականավոր ներկայացուցիչ Վիկտոր Վազարելին ծնվել է 1906թ. Հունգարիայի Պեչ քաղաքում: Մասնագիտական կրթությունը ստանալով նախ` Պոդոլինի-Վոլկման, ապա` «Մյուհելի» ակադեմիայում: 1930թ. Վազարելին տեղափոխվում է Փարիզ: Ուսումնասիրելով օպտիկական ազդեցության, գույն-ձեւ փոխհարաբերության հիմնախնդիրները` Վազարելին զարգացնում է երկրաչափական աբստրակցիայի իր ոճը` հիմք դնելով արվեստի նոր ուղղության: 1965թ. Նյու Յորքի Ժամանակակից արվեստի թանգարանում օպտիկական արվեստին նվիրված «Responsive Eye» (Զգայուն աչք) ցուցադրությունից հետո Վազարելին հռչակվում է օպ-արտի նախահայր:**

**Սահմանելով ձեւ-գույն միասնության սկզբունքը` Վազարելին ստեղծում է «գեղարվեստի այբուբենը», որի բաղկացուցիչ «հիմնատարրերը» գույնի եւ ձեւի վերադասավորումների ու փոխակերպումների արդյունքում առաջացնում են հորինվածքների անսահմանափակ համակցություններ: Մշակելով «գեղարվեստի այբուբենը» որպես գեղարվեստի համամարդկային լեզու` Վիկտոր Վազարելին ձգտում էր արվեստը հասանելի դարձնել յուրաքանչյուրին` նպաստելով արվեստի եւ հասարակության ներդաշնակ զարգացմանը:**

**Գաֆեսճեան արվեստի կենտրոնի (ԳԱԿ) առաքելությունն է ժամանակակից արվեստի լավագույն նմուշները բերել Հայաստան եւ աշխարհին ներկայացնել հայկական մշակույթի լավագույնը: Ոգեշնչվելով իր հիմնադրի` Ջերարդ Գաֆեսճեանի տեսլականով, Կենտրոնը կազմակերպում է բազմազան ցուցահանդեսներ, որոնք ներկայացնում են Ջերարդ Գաֆեսճեանի ժամանակակից արվեստի լայնածավալ հավաքածուն: 2009 թվականի նոյեմբերին տեղի ունեցած բացումից առ այսօր Գաֆեսճեան արվեստի կենտրոնը, հավատարիմ իր առաքելությանը, ցուցադրում է ժամանակակից արվեստի յուրօրինակ գործեր, կազմակերպում դասախոսություններ, ֆիլմերի ցուցադրություններ, համերգաշարեր եւ կրթական ծրագրեր:**

# Հավաքականում առաջընթացն առկա է, սակայն չպետք է բավարարվել ձեռքբերածով

*Այսպիսին է Վարդան Մինասյանի դիրքորոշումը*




Անդորրայի եւ Սլովակիայի հավաքականների նկատմամբ տոնած խոշոր հաշվով հաղթանակներից հետո ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի է աճել, մանավանդ որ եզրափակիչի ուղեգիր նվաճելու հնարավորություններն ավելի իրատեսական են դարձել: Ուստի պատահական չէ, որ մեծ թվով լրագրողներ էին ներկայացել երեկ ֆուտբոլի ֆեդերացիայում երեկ կայացած հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի ասուլիսին: Նա նախ բոլորին շնորհավորեց այդ հաղթանակների առիթով, նշելով, որ ֆուտբոլիստների ոգեւորությունը, բարձր տրամադրությունը բնավ էլ բացասաբար չեն անդրադառնա մակեդոնացիների հետ հանդիպման նախապատրաստության վրա: Մարզիչն ընդունեց, որ հաջողության հասնելու հարցում մարզական բախտը եւս կարեւոր է, սակայն շեշտեց, որ խաղի որակ պետք է լինի, իսկ մարզական բախտն ուղեկցում է նրան, որն ավելի արժանի է:

Խոսելով առաջիկա ընտրական երկու հանդիպումների մասին, Մինասյանը նշեց, որ առայժմ մտածում է միայն մակեդոնացիների հետ մրցավեճի մասին: Ըստ նրա, մակեդոնացիներն իրենց ցուցադրած խաղով ու ներուժով պետք է մրցաշարային աղյուսակում ավելի բարձր դիրք գրավեին: Օրինակ, ինքը դիտել է իռլանդացիների հետ 2 հանդիպումներն էլ, որոնցում մակեդոնացիները զգալի առավելություն ունեին: Այնպես որ Մակեդոնիայի ընտրանու հետ Երեւանում դժվարին մրցակցություն է սպասում:

Մեկնարկային կազմում փոփոխություն կատարելով, հավաքականի գլխավոր մարզիչը ցանկացել էր ուժեղացնել եզրերի խաղը, քանի որ սլովակները հիմնականում եզրերով էին հարձակվելու: Հենրիխ Մխիթարյանը պաշտպանության անցնելու ժամանակ պետք է եզրն ամրապնդեր, իսկ գրոհների ժամանակ տեղափոխվեր կենտրոնական գոտի: Իհարկե, մարզիչը հաշվի էր առել, որ սլովակները իռլանդացիների հետ նախորդ խաղում բավականին ուժեր էին ծախսել, ուստի սպասում էր, որ երկրորդ խաղակեսին մրցակից ֆուտբոլիստների մոտ կարող է հոգնածություն զգացվել: Այդ պատճառով էլ նա իր սաներին ցուցում էր տվել ավելի արագ գործել ընդմիջումից հետո, ինչն ի վերջո ցանկալի արդյունք տվեց: Վարդան Մինասյանը հանդիպման բեկումնային պահ է համարում այն դրվագը, երբ 1-0 հաշվի ժամանակ Ռոման Բերեզովսկին թիմին փրկեց գոլից: Նա նկատեց, որ այդ խաղում մեր խփած առաջին 3 գոլերից հետո սլովակներն անմիջապես վտանգավոր պահեր ստեղծեցին մեր դարպասին:

Իհարկե, դեռեւս վաղ է ամփոփել հավաքականի ելույթները Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում, սակայն ըստ մարզչի, կարելի է արդեն փաստել, որ հավաքականը կայացել է, որն ունի խաղային իր ձեռագիրը, իսկ ամենակարեւորը՝ լավ խաղի հետ նաեւ արդյունք կա: Այս ամենը նշանակում է, որ մի մեծ քայլ առաջընթաց է գրանցվել: Սակայն Մինասյանը խորհուրդ տվեց ֆուտբոլիստներին չբավարարվել ձեռքբերածով, քանի որ դա նրանց հնարավորությունների սահմանագիծը չէ, նրանք ավելի մեծ ներուժ ունեն: Լրագրողներից մեկի հարցին նա պատասխանեց, որ այս հավաքականին տեսնում է Եվրո-2012-ի եզրափակիչի մասնակիցների թվում, սակայն խորհուրդ տվեց ժամանակից առաջ չընկնել ու սպասել իրադարձությունների զարգացմանը:

Ըստ Մինասյանի, երիտասարդական հավաքականում կան 4-5 ֆուտբոլիստներ, որոնք ազգայինի թեկնածուներ են համարվում: Հոկտեմբերին երիտասարդականը խաղեր չի անցկացնելու, ուստի նշված ֆուտբոլիստների ծառայություններից կարելի է օգտվել:

Ինչ վերաբերում է Դենիս Թումասյանի հավաքական չժամանելուն, գլխավոր մարզիչը նշեց, որ ֆեդերացիան 15 օր առաջ էր նրան հրավեր ուղարկել: Ըստ նրա, պարզապես ֆուտբոլիստը չի ցանկացել ժամանել Երեւան: Իսկ Արազ Օզբիլիսը մնում է իր տեսադաշտում: Նա արդեն ապաքինվել է վնասվածքից ու վերսկսել է մարզումները:

Բոլորին անհանգստացնում է Բերեզովսկուն հուսալի փոխարինող գտնելու հարցը, երբ փորձառու դարպասապահը կավարտի մրցելույթները հավաքականում: Մինասյանը նախ հույս հայտնեց, որ Բերեզովսկին դեռ երկար կխաղա, ապա նշեց, որ Ապուլա Բետեի գործողություններում վերջին շրջանում անվստահություն է զգացվում: Սակայն հարկ եղած դեպքում Բետեին կարող են հավաքական հրավիրել:

Խոսք գնաց նաեւ երջանկահիշատակ Յան Պորտերֆիլդի գործի շարունակման մասին: Մինասյանը նշեց, որ միայն լավ հիշողություններ ունի նրա մասին, որն իրեն շատ բան է տվել ու անշուշտ իր հետքը թողել է: Հավաքականում աշխատած մյուս մարզիչներից յուրաքանչյուրն էլ իր ներդրումն ունեցել է:

# Ռուս թենիսիստուհիները դուրս մնացին պայքարից

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում վերջապես վերսկսվեցին հանդիպումները, որոնք ընդհատվել էին հորդառատ անձրեւների պատճառով:

Կանանց մրցաշարում արդեն հայտնի են կիսաեզրափակիչի մասնակիցները: Նրանց թվում Ռուսաստանը ներկայացուցիչ չունի: Քառորդ եզրափակիչում հանդես եկած ռուսաստանցի երկու թենիսիստուհիներն էլ պարտվեցին: Վերա Զվոնարյովան, որ նախորդ տարի ԱՄՆ-ի բաց առաջնությունում հասել էր մինչեւ եզրափակիչ, զիջեց Սամանտա Ստոսուրին (3-6, 3-6): Իսկ Անաստասիա Պավլյուչենկովան պարտվեց Սերենա Ուիլյամսին (5-7, 1-6):



Կիսաեզրափակիչում Ուիլյամսի մրցակիցը կլինի դանիացի Կարոլին Վոզնյացկին, որը պարտության մատնեց գերմանացի Անդրեա Պետկովիչին (6-1, 7-6): Իսկ Ստոսուրը կմրցի գերմանացի Անգելիկա Կերբերի հետ, որն առավելության հասավ իտալացի Ֆլավիա Պենետայի նկատմամբ (6-4, 4-6, 6-3):

Տղամարդկանց մրցաշարում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի առաջին երկու մասնակիցները: Նովակ Ջոկովիչը հաղթեց իր հայրենակից Յանկո Տիպսարեւիչին, որը 4-րդ խաղափուլում հրաժարվեց պայքարից: Կիսաեզրափակիչում նրա մրցակիցը կլինի Ռոջեր Ֆեդերերը, որը երեք խաղափուլում (6-4, 6-3, 6-3) պարտության մատնեց Ժո Ուիլֆրիդ Տսոնգային:

# Էլինա Դանիելյանն անհաջողության մատնվեց

**Էլինա Դանիելյանին ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: Հայ շախմատիստուհին առայժմ խիստ անհաջող է հանդես գալիս Չինաստանում ընթացող շախմատի Գրան պրիի խաղարկության 2-րդ փուլում: 3-րդ տուրում նա սեւերով արդեն 30-րդ քայլին պարտվեց Եվրոպայի չեմպիոնուհի Վիկտորիա Չմիլիտեին: 3 տուրից հետո Դանիելյանը վաստակել է ընդամենը կես միավոր եւ Եկատերինա Կովալեւսկայայի ու Բաթխույագ Մունգունտուլի հետ եզրափակում է աղյուսակը:**

**Առաջին կես միավորները կորցրին առաջատարները: Հոու Յիֆանը հաշտություն կնքեց Բեթուլ Յիլդիզի հետ, իսկ Չժան Սյուեն ոչ-ոքի խաղաց Ժու Չենի հետ: Յիֆանն ու Չժան Սյուեն 2,5-ական միավորով շարունակում են գլխավորել աղյուսակը: Հաշտություն կնքեցին նաեւ Մուզիչուկն ու Մունգունտուլը, Ժուան Լուֆեյն ու Ցզյու Վենցզյունը: Առաջին հաղթանակը տոնեց Տան Չժունին՝ պարտության մատնելով Եկատերինա Կովալեւսկայային:**

# Հաղթեց միայն Իվանչուկը

Խանտի Մանսիյսկում կայացան շախմատի աշխարհի գավաթի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումները: 4 մրցախաղերից միայն մեկն արդյունավետ ելք ունեցավ: Վասիլի Իվանչուկը սպիտակներով հաղթեց Թեյմուր Ռաջաբովին: Սվիդլեր-Պոլգար, Գրիշչուկ-Նավարա, Պոնոմարյով-Հաշիմով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Այսօր կկայանան մրցախաղերի 2-րդ պարտիաները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Դարչինյանին վրդովեցրել էին մամուլի որոշ հրապարակումներ

**Երեկ «Տեսակետ» ակումբում «Մարության ընտանիք» ընկերության համագործակցությամբ մամուլի ասուլիս էր կազմակերպվել պրոֆեսիոնալ բռնցքամարտիկներ Վախթանգ Դարչինյանի, Գաբրիել Տոլմաջյանի եւ Ազատ Հովհաննիսյանի մասնակցությամբ:**

**Վախթանգ Դարչինյանը շնորհակալություն հայտնելով շնորհավորանքների համար, նշեց, որ վերջապես իրականացավ երազանքը եւ Հայաստանում հաջողվեց չեմպիոնական գոտու համար պրոֆեսիոնալ բռնցքամարտի մենամարտ անցկացնել: Այդ ցանկությունը տարիներ առաջ էր մտահղացել, սակայն դրա իրականացման համար անհրաժեշտ եղավ շատ դժվարություններ հաղթահարել: Վախթանգը դեռեւս 2 ամիս առաջ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին տեղեկացրել է Հայաստանում մենամարտ կազմակերպելու ցանկության մասին: Վերջինիս եւ հովանավորների աջակցությամբ հնարավոր եղավ**




**բռնցքամարտի երեկոն կազմակերպել, որը Վախթանգի կարծիքով ստացվեց: Եվ ի նշան երախտագիտության, Դարչինյանը որոշել էր հաճելի անակնկալ մատուցել երկրի նախագահին՝ միջազգային ֆեդերացիայի թույլտվությամբ IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր գոտին մենամարտից հետո նվիրելով Սերժ Սարգսյանին:**

**Ի դեպ, բռնցքամարտիկի այդ քայլը որոշ լրատվամիջոցներ այլ կերպ էին մեկնաբանել՝ նշելով, թե դա Վախթանգն մարզադպրոցի համար Երեւանում իրեն անվճար հատկացված տարածքի դիմաց է կատարել: Այդ հրապարակումները վրդովեցրել էին Վախթանգին ու նա ստիպված էր որոշ պարզաբանումներ տալ՝ բացելով փակագծերը:**

**Նախ տարածքի համար ինքը որոշակի գումար է վճարել, բացի այդ էլ զգալի միջոցներ պետք է ծախսի բռնցքամարտի մարզադպրոցի շինարարության համար: Նա նաեւ նշեց, որ չնայած հովանավորների աջակցությանը, բռնցքամարտի երեկոյի կազմակերպման եւ անցկացման համար ինքն անձնական միջոցներից ավելի մեծ գումար է ծախսել: Վախթանգը խոստովանեց, որ կարող էր այդ ամենը չանել եւ մենամարտել ԱՄՆ-ում ու մեծ գումար վաստակել՝ խուսափելով ավելորդ գլխացավանքից:**

**Անդրադառնալով Էվանս Մբամբայի հետ մենամարտին, Վախթանգը նշեց, որ շատ էր ցանկանում նոկաուտով ավարտել: Երեւի հենց այդ բուռն ցանկությունն էլ խանգարեց մտահղացումն իրականացնել: Բայց մյուս կողմից Դարչինյանն ուրախ է, որ մարզասերները հնարավորություն ունեցան 12-ռաունդանոց մենամարտի ականատեսը դառնալ:**

**Մբամբայի ընտրությունը պատահական չէր: Դարչինյանի պրոմոութերները միջազգային ֆեդերացիայից խնդրել էին ուժեղ մրցակից ընտրել Վախթանգի համար: Եվ Մբամբան ապացուցեց, որ իրոք լավ բռնցքամարտիկ է: Նա մինչ այդ միայն մեկ պարտություն էր կրել:**

**Վախթանգ Դարչինյանը դեռեւս մտադիր չէ ավարտել պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի կարիերան: Հնարավոր է, որ կրկին փոխի քաշային իր կարգը, ցանկանում է մենամարտել Մարեսի եւ Նոնիտո Դոների հետ, սակայն վերջիններս հրաժարվում են: Հաջորդ մենամարտը նախատեսվում է դեկտեմբերին, մրցակիցը դեռեւս հայտնի չէ:**

**Գաբրիել Տոլմաջյանն ու Ազատ Հովհաննիսյանը նշեցին, որ իրենց համար մեծ պատիվ էր Վախթանգ Դարչինյանի հետ բռնցքամարտի նույն երեկոյի ընթացքում ռինգ դուրս գալը: Երկուսն էլ ուրախ են, որ այդ օրը հաղթեցին մրցակիցներին: Պրոֆեսիոնալ բռնցքամարտում առաջին քայլերը կատարող բռնցքամարտիկները հույս ունեն կատարելագործել իրենց վարպետությունը, փորձ ու հմտություն ձեռք բերել եւ ժամանակի ընթացքում իրենք էլ ձեռնոց նետեն ուժեղագույններին:**

# Մեկնարկում է պատանեկան շախմատի ստուգատեսը

**Վաղը Բուլղարիայի Ալբենա քաղաքում մեկնարկում է շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը: Տարիքային վեց խմբով (8-18) տարեկաններ անցկացվող պատանիների ու աղջիկների մրցաշարերում ընդհանուր առմամբ հանդես կգան Հայաստանի 31 շախմատիստներ:**

**Մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարում հաղթողի հավակնորդներից մեկը գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանն է, որն իր վարկանիշով (2558) գլխավորում է մասնակիցների ցանկը: Տարիքային այդ խմբում հանդես կգա նաեւ Հայկ Վարդանյանը:**

**Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում Կարեն Գրիգորյանը վարկանիշով (2473) 3-րդն է: Լավագույն տասնյակում է նաեւ Հովհաննես Գաբուզյանը (2404): Այստեղ հանդես կգա նաեւ Զոհրակ Ապրեսյանը, որը նախորդ ամիս հաղթող էր ճանաչվել Համահայկական խաղերում:**

**Աղջիկների մրցաշարի հայ մասնակիցներից ամենաբարձր վարկանիշն ունի Հայաստանի մինչեւ 18 տարեկանների առաջնության հաղթող Մարիա Գեւորգյանը (2047):**

# Մարիա Կուրսովան կներկայացնի Հայաստանը

**Armchess.am-ի տեղեկացմամբ այսուհետ գրոսմայստեր Մարիա Կուրսովան, որ ամուսնացել է հայ շախմատիստ Արման Փաշիկյանի հետ եւ բնակվում է Երեւանում, կներկայացնի Հայաստանը: Նա ՌԴ շախմատային ֆեդերացիայից տեղափոխվել է Հայաստանի շախմատային ֆեդերացիա: ՖԻԴԵ-ն հաստատել է այս տեղափոխությունը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրացույց

# Ականավոր մաթեմատիկոսը

### *Ակադեմիկոս Նորայր Հ. Առաքելյանի 75-ամյա հոբելյանի առթիվ*



Լրացավ ականավոր մաթեմատիկոս, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Նորայր Հունանի Առաքելյանի ծննդյան 75 տարին:

Ն. Առաքելյանը ծնվել է 1936թ. հուլիսի 17-ին Հայկական ՍՍՀ Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում մանկավարժի ընտանիքում: 1958թ. նա ավարտել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը «մաթեմատիկա» մասնագիտությամբ, որից հետո սկսվել է նրա եռանդուն գիտամանկավարժական գործունեությունը Հայաստանի ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում եւ Երեւանի պետական համալսարանում:

Թեկնածուական ատենախոսությունը Ն. Հ. Առաքելյանը պաշտպանել է 1962թ. ակադեմիկոս Մ. Մ. Ջրբաշյանի ղեկավարությամբ, իսկ 8 տարի անց՝ 1972թ., ՍՍՀՄ ԳԱ Վ. Ա. Ստեկլովի անվան Մաթեմատիկական ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Մոտավորությունների տեսության եւ ամբողջ ֆունկցիաների տեսության որոշ հարցեր» թեմայով:

Այդ աշխատանքներում Ն. Առաքելյանն էապես զարգացրեց ամբողջ ֆունկցիաներով մոտավորությունների տեսությունը, որի շնորհիվ հետագայում լուծվեցին նաեւ ֆունկցիաների ընդհանուր տեսությանը վերաբերող մի շարք կարեւոր հիմնախնդիրներ: Շարունակելով Տ. Կարլեմանի, Մ. Ա. Լավրենտեւի, Մ. Վ. Կելդիշի, Ս. Ն. Մերգելյանի հանրահայտ հետազոտությունները՝ նա ստացավ ամբողջ ֆունկցիաներով հավասարաչափ մոտավորության պրոբլեմի վերջնական լուծումը: Մոտավորությունների տեսության վերաբերյալ ստացված արդյունքների կիրառությունը թույլ տվեց Ն. Առաքելյանին հերքել Ռ. Նեւանլիննայի հայտնի վարկածը վերջավոր կարգի ամբողջ ֆունկցիայի դեֆեկտային արժեքների քանակի մասին: Հետազոտությունների այս շարքի համար նրան 1970թ. շնորհվեց երիտասարդ գիտնականների համամիութենական մրցանակը:

1974թ. Ն. Հ. Առաքելյանը ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ իսկական անդամ:

Շուրջ չորս տասնամյակ աշխատելով ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում՝ Ն. Առաքելյանն անցավ գիտական գործունեության բոլոր փուլերով՝ զբաղեցնելով կրտսեր եւ ավագ գիտաշխատողի, այնուհետեւ բաժնի վարիչի, ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի եւ ինստիտուտի տնօրենի պաշտոնները:

Ն. Առաքելյանի կողմից ստացված գիտական արդյունքներն արագ արձագանք գտան եւ արժանացան միջազգային լայն ճանաչման: 1970թ. նա հրավիրված դասախոսություն կարդաց մաթեմատիկոսների միջազգային համաժողովում (Նիցցա): Հետագայում նա ընդգրկվեց Վանկուվերի (1974) եւ Վարշավայի (1983) համաժողովների կազմակերպչական աշխատանքների մեջ որպես կոմպլեքս անալիզի հանձնախմբի անդամ: 1970-1980 թթ. Ն. Առաքելյանը ՍՍՀՄ ԳԱ «Математические заметки» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ էր, իսկ 2005 թվից «Analysis» միջազգային ամսագրի խմբագրության անդամ է: 1994-1998 թթ. եղել է Հայկական մաթեմատիկական միության նախագահը: 2004 թ. Ն. Առաքելյանին շնորհվել է Տրիրի համալսարանի (Գերմանիա) պատվավոր դոկտորի կոչում:

Երկար տարիներ Ն. Առաքելյանն իր աշակերտների հետ միասին զբաղվել է նաեւ անալիտիկ ֆունկցիաների դասական Վայերշտրասյան տեսության խնդիրների հետազոտմամբ: Այս ճանապարհին արդեն վերջնական լուծում են ստացել մի շարք դժվարին խնդիրներ, որոնք սկիզբ են առնում Ժ. Ադամարի, Ե. Ֆաբրիի, Է. Լինդելյոֆի, Գ. Պոլիայի եւ այլոց դասական հետազոտություններից:

Գիտական գործունեությանը զուգընթաց Ն. Առաքելյանը մեծ նվիրումով զբաղվել է նաեւ գիտամանկավարժական գործունեությամբ եւ դժվար է գնահատել նրա դերը ԵՊՀ մաթեմատիկայի եւ մեխանիկայի ֆակուլտետի կայացման ու զարգացման գործում:

1991-1993 թթ. Ն. Առաքելյանը եղել է Երեւանի պետական համալսարանի ռեկտորը, 1992-2000 թթ. ղեկավարել է ԵՊՀ ֆունկցիաների տեսության ամբիոնը: Տասնյակ տարիներ Ն. Առաքելյանը դասավանդել է ԵՊՀ մաթեմատիկայի եւ մեխանիկայի ֆակուլտետում՝ կարդալով ընդհանուր եւ հատուկ դասընթացներ կոմպլեքս անալիզի տարբեր ուղղություններով, ղեկավարել դիպլոմային եւ թեկնածուական աշխատանքներ: Նրա կարդացած բարձրակարգ դասախոսություններով մաթեմատիկական դաստիարակություն են ստացել հարյուրավոր ուսանողներ: Ն. Առաքելյանի բազմաթիվ աշակերտներ ժամանակի ընթացքում դարձել են հայտնի մասնագետներ՝ գիտության թեկնածուներ եւ դոկտորներ:

Ներկայումս Ն. Առաքելյանը ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է եւ շարունակում է իր եռանդուն գործունեությունը՝ ի նպաստ հայկական ակադեմիական գիտության զարգացման եւ միջազգային ճանաչման:

Մոտ օրերս Ծաղկաձորում կայանալիք «Հարմոնիկ անալիզ եւ մոտավորություններ» միջազգային գիտաժողովը, որին կմասնակցեն շուրջ երկու տասնյակ երկրների ավելի քան 100 մաթեմատիկոսներ, նվիրված է Ն. Առաքելյանի 75-ամյակին:

Հայաստանի գիտությունը, ի դեմս Ն. Առաքելյանի, ունի նշանավոր եւ համաշխարհային ճանաչման արժանացած մաթեմատիկոս ֆունկցիաների տեսության կարեւոր բնագավառում: Ցանկանում ենք նրան առողջություն, երկար տարիների կյանք եւ ստեղծագործական նոր հաջողություններ:

**Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ նախագահ,**
**ակադեմիկոս**
**Վ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի**
**ինստիտուտի տնօրեն,**
**թղթակից անդամ**

# Հրատարակվել է նոր ուղեցույց

Երեւանի քաղաքապետարանի կառուցվածքի եւ գործառույթների մասին բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ Երեւանի քաղաքապետարանը, COUNTERPART INTERNATIONAL ոչ կառավարական կազմակերպության Երեւանյան գրասենյակի հետ համագործակցությամբ, հրատարակել է «Ճանապարհ դեպի քաղաքապետարան» ուղեցույցը:

Համատեղ ծրագրով հրատարակված ուղեցույց-գրքույկում հանրամատչելի կերպով ներկայացված են Երեւանի քաղաքապետարանի բոլոր ստորաբաժանումներն ու նրանց իրավասությունների շրջանակը:

2000 օրինակ տպաքանակով հրատարակված գրքույկների առաջին խմբաքանակը մայրաքաղաքի բնակչությանը կտրամադրվի ինչպես քաղաքապետարանի, այնպես էլ բոլոր վարչական շրջաններում գործող «Մեկ պատուհան» գրասենյակների միջոցով:

*Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հուշադրամների էսքիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրապարակային մրցույթ՝

1. «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ»
2. «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ»
3. «Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ»
4. «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ»

հուշադրամների էսքիզների ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան 6 հասցեով:

Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2011թ. հոկտեմբերի 20-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2011թ. հոկտեմբերի 24-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփումը իրականացվելու է 2011թ. հոկտեմբերի 31-ին ժամը 16:00-ն:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (**www.cba.am**):

Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ-ի Դրամաշրջանառության կարգավորման վարչություն:

Հեռ.՝ +374 10 59 29 05, +37410 59 29 01,
Ֆաքս՝ +374 10 56 74 23, +374 10 52 38 52
Էլ. փոստ՝ nuneteryan@cba.am, emission@cba.am

***ՀՀ ԿԲ հասարակայնության հետ ծառայություն***

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

**Վաճառվում է**
**Volkswagen Jetta**
**մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մուգ) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:**

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ**
**www.vdv.am**
**կայքում**

www.azg.am







ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝9.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: